МЕТРОГИПРОТРАНС

Երևան քաղաքի Աջափնյակ շրջանում մետրոյի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման խորհրդատվական աշխատանքների կատարումը. Փուլ 3.

Выполнение консультационных работ по подготовке проектно-сметной документации на строительство станции метро в районе Ачапняк города Еревана. 3 этап.

Performing consulting work on preparation of design and estimate documentation for construction of the metro station in the district of Ajapnyak, city of Yerevan. Stage 3

ՀԱՇՎԵՏՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ОТЧЕТНАЯ ДОКУМЕНТАЦИЯ
REPORTING DOCUMENTATION

ԲԱԺԻՆ 7	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՇՄՊ)
РАЗДЕЛ 7	МЕРОПРИЯТИЯ ПО ОХРАНЕ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ (ООС)
SECTION 7	ENVIRONMENTAL PROTECTION MEASURES
Գիրք 1	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Շինարարության ժամանակացույց: Շահագործման ժամանակահատված: Բացատրագիր:
Книга 1	Оценка воздействия на окружающую среду. Период строительства. Период эксплуатации. Пояснительная записка.
Book 1	Assessment of the environmental impact. Before construction. During operation. Explanatory note.

АРП-1-ООС-1

Հատոր 7.1
Том 7.1
Book 7.1

2023

ՄԵՏՐՈԳԻՊՐՈՏՐԱՆՍ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО МЕТРОГИПРОТРАНС
JOINT STOCK COMPANYMETROGIPROTRANS

Երևան քաղաքի Աջափնյակ շրջանում մետրոյի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման խորհրդատվական աշխատանքների կատարումը. Փուլ 3.
Выполнение консультационных работ по подготовке проектно-сметной документации на строительство станции метро в районе Ачапняк города Еревана. 3 этап.
Performing consulting work on preparation of design and estimate documentation for construction of the metro station in the district of Ajapnyak, city of Yerevan. Stage 3

ՀԱՇՎԵՏՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ОТЧЕТНАЯ ДОКУМЕНТАЦИЯ
REPORTING DOCUMENTATION

ԲԱԺԻՆ 7	**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՇՄՊ)**
РАЗДЕЛ 7	**МЕРОПРИЯТИЯ ПО ОХРАНЕ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ (ООС)**
SECTION 7	**ENVIRONMENTAL PROTECTION MEASURES**
Գիրք 1	**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Շինարարության ժամանակացույց: Շահագործման ժամանակահատված: Բացատրագիր:**
Книга 1	**Оценка воздействия на окружающую среду. Период строительства. Период эксплуатации. Пояснительная записка.**
Book 1	**Assessment of the environmental impact. Before construction. During operation. Explanatory note.**

АРП-1-ООС-1

Հատոր 7.1
Том 7.1
Book 7.1

Գլխավոր ինժեներ Главный инженер Chief Engineer	Դ. Ա. Պոմազկովա Д.А. Помазкова D.A. Pomazkova
Ծրագրի գլխավոր ինժեներ Главный инженер проекта Chief Project Engineer	Դ.Ա. Պավլովսկի Д.А. Павловский D.A. Pavlovsky

Փոփոխ.	Փաստա-թղթի №	Ստորա-գրություն	Ամսաթիվ
Изм.	№ док.	Подп.	Дата
Rev.	No. doc.	Signature	Date

2023

Взам.инв.№
Подп. И дата
Инв. № подл.

«ԳԵՈՌԻՍԿ» Գիտահետազոտական ընկերություն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԱՋԱՓՆՅԱԿ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԵՏՐՈՅԻ ԿԱՅԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ



ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱ-ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հուլիս 2023, Երևան

«ԳԵՈՌԻՍԿ» Գիտահետազոտական ընկերություն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԱՋԱՓՆՅԱԿ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԵՏՐՈՅԻ ԿԱՅԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱ-ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
«Գեոռիսկ»ՓԲԸ տնօրեն՝
Ս.Առաքելյան
06 Հուլիս, 2023թ.

Երևան -2023

Բովանդակություն

1. ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ 5
1.1. Մեթոդաբանություն 6
1.2. Երևան քաղաքի առկա խնդիրների համառոտ նկարագիր 7
1.2.1. Բնակլիմայական պայմաններ 7
1.2.2.Շրջակա միջավայր 10
1.2.3.Տրանսպորտ 10
1.2.4.Բնական աղետների ռիսկեր 10
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 12
3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 12
4. ԲՆԱԿԱՆ և ՏԵԽՆՈԳԵՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ 14
4.1. Մթնոլորտային օդ 14
4.2. Ջրային ռեսուրսներ 20
4.3. Հողեր 23
4.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները 23
5. ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 25
5.1. Տարածքի բուսական աշխարհի համառոտ նկարագրություն 26
5.2. Տարածքի կենդանական աշխարհի համառոտ նկարագրություն 30
5.2.1.Թռչուններ 30
5.2.2.Կաթնասուններ 32
5.2.3.Երկկենցաղներ և սողուններ 33
5.2.4.Ձկներ 35
5.2.5.Անողնաշար կենդանիներ 35
5.3. Նկարներ 37
5.4. Օգտագործված գրականության ցանկ 41
6. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44
6.1. Ծրագրի իրականացման տակ ներառված տարածքի և շրջակայքի պատմա-մշակութային ռեսուրսները, պատմա-հնագիտական տեղեկանք 44
6.2. Ծրագրի իրականացման ընթացքում պատմա-մշակութային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության ռիսկերի նկարագրությունը 45
6.3. Ծրագրի իրականացման ընթացքում պատմա-մշակութային ռեսուրսների վրա բացասական ազդեցության ռիսկերը մեղմելու միջոցառումները (նախնական եզրակացություն) 46
6.4. Օգտագործված գրականության ցանկ 48
6.5. Նկարներ 53
7. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ 75
7.1. Երկրաբանական հուշարձաններ 75
8. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ 75
8.1. Ընդհանուր տեղեկատվություն 75
8.2. Աջափնյակ Վարչական շրջան 76
8.3. Արաբկիր Վարչական շրջան 78
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 79
9.1. Շինարարության փուլ 80
9.2. Շահագործման փուլ 84

10. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 85
10.1. Նախագծման փուլ 86
10.2. Շինարարության փուլ 86
10.3. Շահագործման փուլ 92
11. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ 93
12. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 94

1. ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ

«Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցում» ծրագրի աշխատանքների 2-րդ փուլի փաստաթղթերն իրականացվել են 09.11.2021 թ.-ի գնման պայմանագրի հիման վրա ՝ 10.04.2023 թ.-ի պայմանագրի 2-րդ փուլի աշխատանքների կատարման վերաբերյալ թիվ 3 լրացուցիչ համաձայնագրի շրջանակներում Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոյի կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման խորհրդատվական աշխատանքների կատարման համար:

Նախնական նախագիծն իրականացվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գործող նորմատիվ փաստաթղթերը և միջազգային ֆինանսական կազմակերպությունների քաղաքականությունը, կազմում Ռուսաստանի Դաշնության նորմերի պահանջները ՝ համաձայն գնման պայմանագրի հավելված 1.2-ի:

Քարտեզ 1. «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցում» ծրագրի հատակագիծ



Այն հարթակները և տարածքները, որոնց նկատմամբ կատարվել է գնահատում, սահմանված են Երևանի քաղաքապետարանի կողմից ընդունված աշխատանքների 1-ին փուլի տեխնիկական և պլանավորման որոշումներով (գրություն 27.03.23 թ.թիվ 04/51896-23):

«Երևանի Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցում» ծրագրի 2-րդ փուլի աշխատանքների կատարման շրջանակներում իրականացվել է սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում, մշակութային-հնագիտական ուսումնասիրություններ, կատարվել է հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:

Բացի այդ, աշխատանքի շրջանակում իրականացվել են ինժեներական և գեոդեզիական հետազոտություններ՝ ստորգետնյա կոմունալ ծառայությունների կիրառմամբ ինժեներական և տեղագրական հատակագծի պատրաստմամբ և կանխատեսվող ուղևորահոսքերի հաշվարկով՝ հաշվի առնելով քաղաքաշինական ներկա իրավիճակը և սպասվող փոփոխությունը: վերգետնյա հասարակական տրանսպորտի երթուղիներում նախագծված կայանի տարածքներում և ամբողջ գծի երկայնքով:

Սույն ճարտարագիտաբնապահպանական հետազոտության նպատակն է նախատեսվող գործունեության ճարտարագիտական և բնապահպանական պայմանների համապարփակ ուսումնասիրությունը, նյութեր և տվյալներ ստանալը բնական միջավայրի բաղադրիչների դրանց վրա նախատեսվող գործունեության արդյունքում առաջացրած ազդեցության հնարավոր աղբյուրների մասին տեղեկատվության հավակագրումը:

Սույն հաշվետվությունը ներառում է (i) շրջակա միջավայրի ներկա իրավիճակի, (ii) օրենսդրական դատի վերլուծությունը, (iii) բնապահպանական և տեխնոգեն պայմանների համառոտ նկարագիրը, (iv) հողային, բուսական և կենդանական ռեսուրսների և (v) հատուկ պահպանվող տարածքների նկարագրությունը (vi) նախատեսվող գործունեության տարածքի առկա բնապահպանական, սոցիալական և տնտեսական վիճակի վերլուծությունը, բնապահպանական ռիսկերի և հնարավոր բացասական ազդեցությունների գնահատումը, ինչպես նաև դրանց մեղմացման միջոցառումները:

1.1. Մեթոդաբանություն

Երևան քաղաքի «Աջափնյակ» վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցման ծրագրի ճարտարագիտաբնապահպանական հետազոտույան հաշվետվությունը կազմվել է՝ հիմնվելով 2 փուլից բաղկացած մեթոդաբանության վրա:

1-ին փուլի նպատակն էր բացահայտել, հավաքագրել, մշակել և վերլուծել համապատասխան տեղեկատվությունը և տվյալները՝ սահմանելու համար այն ելակետային ցուցանիշները, որոնց հիման վրա պետք է մշակվի հաշվետվությունը:

2-րդ փուլի նպատակն էր բուն ճարտարագիտաբնապահպանական հետազոտույան հաշվետվության մշակումը, որտեղ ներգրավված փորձագետների խմբի հետ համատեղ գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական ռիսկերը և հնարավոր բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց մեղմացման միջոցառումները:

Երևան քաղաքի «Աջափնյակ» վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցման ծրագրի ճարտարագիտաբնապահպանական հետազոտության հաշվետվությունը կազմվել է բնապահպանական թիմի՝ տեխնիկական գիտությունների թեկնածու Վիկտոր Բախտամյանի և հետազոտող Տիգրան Օգանեզովի կողմից ս.թ. հունիս 28 - հուլիսի 07 ընկած ժամանակահատվածում:

1.2. Երևան քաղաքի առկա խնդիրների համառոտ նկարագիր

1.2.1. <u>Բնակլիմայական պայմաններ</u>

Երևանը գտնվում է հարթավայրում՝ Արարատյան դաշտի եզրին՝ ծ.մ. 860-1.400մ բարձրության վրա: Ունի չոր մայրցամաքային կլիմա:

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24.5˚C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 49%, լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2.9 ˚C է:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12^{0}C: Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 21 ^{0}C, բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 41 ^{0}C:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Քամու առավելագույն արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը `70կգ/մ^2 է: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ է:

Տեղումների տարեկան քանակը կազմում է 286-440մմ և առավելագույնին է հասնում նոյեմբերին, թեև անձրևոտ օրերի ամենամեծ մասնաբաժինն ընկնում է մայիս ամսին: Հայաստանը արևոտ երկիր է: Արևափայլքի տարեկան միջին տևողությունը 2,578 ժամ է:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Նհրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն" ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից:

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում:

Աղյուսակ 1. Օդի ջերմաստիճանը, ^0C

Բնակավայրի անվանումը		Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
			I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան «Արաբկիր»		1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 2. Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը													Ձյան ծածկույթը		
	Ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (ՀՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղությունների Միջին արագություն, մ/վ								Անհողմություններ կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	2.0
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9			
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1	
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5			
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4	
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6			
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8	
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0			

1.2.2. Շրջակա միջավայր

Բնապահպանական բաղադրիչների, այդ թվում՝ օդի, հողի, ջրի և կենսաբազմազանության վիճակը, կրում է մարդու գործունեության ազդեցությունը: Երևանում օդի որակի հետ կապված հիմնական մարտահրավերներն են՝ օդում փոշու մասնիկների բարձր կոնցենտրացիան, ինչպես նաև SO2 և NO2 արտանետումները: 1990-ականներին կանաչ տարածքների զգալի անկումը բացասաբար է անդրադարձել կենսաբազմազանության վրա, ինչը հանգեցրել է Երևանի տարածքում վերջինիս կորստին: Հողի վրա նկատվում են տարատեսակ աղտոտումների հետքեր: Ջրային ոլորտի վերլուծությունը ցույց է տալիս, որ կան մակերեսային ջրերի աղտոտման խնդիրներ, ստորգետնյա ջրերի մասին տեղեկատվության բացակայություն, առկա է ջրի և կեղտաջրերի ենթակառուցվածքների հետագա զարգացման նշանակալի պահանջ:

1.2.3. Տրանսպորտ

Երևան քաղաքի ռազմավարական զարգացման առանցքային ոլորտներից մեկը տրանսպորտն է: Հիմնական մարտահրավերներն են՝ տրանսպորտային ենթակառուցվածքները և կառավարումը, ինչպես նաև փոխադրամիջոցների տարիքը: Չնայած վերջին տարիներին Երևանի ճանապարհային ցանցը բավականին զարգացել է, և նախատեսվում են նաև դրա հետագա ընդլայնումն ու բարելավումը, այնուամենայնիվ անհրաժեշտություն կա հասարակական տրանսպորտի կողմից ճանապարհների օգտագործման, էլեկտրական տրանսպորտի ցանցի, այդ թվում մետրոպոլիտենի, ընդլայնման, ինչպես նաև այլընտրանքային տրանսպորտի ձևերի ավելացման[1]:

1.2.4. Բնական աղետների ռիսկեր2

Հայաստանը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում: Համաշխարհային բանկը ներառել է Հայաստանը աղետների ենթակա 60 երկրների ցանկում[3]: Աղետի հավանականությունը և դրա ուժգնության աստիճանը բարձր են: Հիմնական սպառնալիքը սեյսմիկ վտանգներն են, ինչպես նաև փոթորիկները, կարկուտը, ջրհեղեղները և սողանքները՝ որպես լրացուցիչ բնական աղետների ռիսկ: Բազմաթիվ ուսումնասիրություններ են անցկացվել՝ վերոնշյալ ռիսկերի հիմնական պատճառները և համապատասխան կանխարգելման միջոցները վերլուծելու համար:

Բնական աղետները բացասական ազդեցություն են ունեցել Հայաստանի տնտեսության վրա, և խոցելիության աստիճանը դեռևս բարձր է: Համաձայն ազդեցության նվազեցման 2013թ. ուսումնասիրության՝ յուրաքանչյուր տարի առկա է 20% հավանականություն, որ տեղի կունենա մեծածավալ աղետ, որի արդյունքում ՀՆԱ-ի

[1] Երևան քաղաքի «Կանաչ Քաղաք» գործողությունների ծրագիր, Երևան 2017թ.
[2] Երևան քաղաքի «Կանաչ Քաղաք» գործողությունների ծրագիր, Երևան 2017թ.
[3] Հայաստանում աղետների կառավարումը, Արմեն Երիցյան, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետություն, 2013թ., մայիս

կորուստը կկազմի 12.7%[4]: Ավելին, բնակչության վրա ազդեցությունը նույնպես բարձր է, քանի որ դրա 80%-ը ենթակա է աղետի ռիսկի:

Երևան քաղաքի «Աջափնյակ» վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցման ծրագրի համար հիմնական ռիսկերն են սողանքները և սեյսմիկ կայունությունը:

Սողանքները բավականին տարածված են Հայաստանում, և վերջին տարիներին նրանց առաջացման թիվը և ծավալներն աճել են՝ պայմանավորված անտառահատումների, ջրային ռեսուրսների և ոռոգման կառավարման ոչ պատշաճ կազմակերպումով, ինչպես նաև սողանքների մեջ շրջանառվող ջրային մնացորդի փոփոխությամբ: Սողանքների ենթակա տարածքը կազմում է 122.000 հա (Հայաստանի տարածքի մոտ 4.1%-ը) և բնակավայրերի 35%-ը:

Երևանը Հայաստանի այլ շրջանների համեմատությամբ ունի սողանքների ավելի ցածր ռիսկ, այդուհանդերձ սողանքներն առաջանում են քաղաքի տարածքի 6%-ում:

Սեյսմիկ **ռիսկը** բնական աղետների ցանկում ներկայացնում է ամենամեծ սպառնալիքը: Սեյսմիկ ռիսկի վտանգը առավելագույնս կենտրոնացված է Երևանում և, հետևաբար, ազդեցություն ունի Հայաստանի ամբողջ բնակչության 40%-ի վրա: Համաձայն «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանում ներկայումս ակնկալվում են երկրաշարժեր՝ գրունտի առավելագույն 0.4գ արագացումով: Շնորհիվ ԱՏՀ-ի՝ սեյսմիկ ռիսկի գործոնները հաշվարկվել են Երևանի գրեթե բոլոր շենքերի համար: Բարձր սեյսմիկ ռիսկի ենթակա գոտիները կազմում են մոտավոր 2.600 հա (քաղաքի տարածքի 15%-ը) և 5.389 շենք, մյուս 4.400 հա-ն (քաղաքի տարածքի 24%-ը) նույնպես պետք է հաշվի առնվեն բարձր սեյսմիկ ռիսկի տարածքում՝ նկատի ունենալով 34.143 սեփական ցածրահարկ տները: Մնացած 2.185 շենքերն ունեն ոչնչացման միջին ռիսկ: Երևանի սեյսմիկ գործունեությունն ուսումնասիրվել է բազմաթիվ միջազգային հաստատությունների կողմից, և մեծամասնությունը համաձայն են, որ 7.0 և ավելի ուժգնությամբ երկրաշարժը կոչնչացնի շենքերի մեծ մասը՝ հանգեցնելով մեծաքանակ մարդկային զոհերի[5]:

[4] ԴԱԳ Հայաստանի ազգային ուսումնասիրություն: Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն, 2013թ.:
[5] Ազգային աղետների ռիսկերի գնահատման և կառավարման համատեքստում Հայաստանում իրավիճակի գնահատման վերջնական զեկույց (աղբյուր՝ ՄԱԿԶԾ, 2013թ):

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի մետրոպոլիտենը ներկայումս ունի 10 կայարան, ավելի քան 12 կմ ընդհանուր շահագործվող երկարության գիծ, շահագործվող վագոնների թիվը 32 է, ինչն էլ նախատեսված հավաքակազմի 71,1%-ն է:

Մետրոպոլիտենը տարեկան տեղափոխում է ավելի քան 20 մլն ուղևոր: Թվային ցուցանիշներով Երևանի մետրոպոլիտենից 2021թ. օգտվել է 18 մլն.573 հազար 710 ուղևոր, իսկ 2022թ.՝ 23 մլն.317 հազար 633 ուղևոր:

Խորհրդային Միության տարիներին մշակված ու տասնամյակներ ի վեր թղթի վրա մնացած Երևանի մետրոպոլիտենի 11-րդ՝ «Աջափնյակ» կայարանի կառուցման ծրագիրը մտել է գործնական փուլ: Նոր կայարանը նախագծում է Երևանի քաղաքապետարանի հայտարարած մրցույթում հաղթող ճանաչված «Մետրոգիպրոտրանս» Բաժնետիրական Ընկերությունը:

«Բարեկամությունից» Աջափնյակ՝ դեպի նոր կայարան մետրոյի գնացքը կհասնի հորատանցված երկու վազորդային թունելներով, որոնք ապահովելու են ելքը դեպի կիրճի հարթակ: Հենց այդտեղից էլ նախատեսվում է կառուցել մոտ 150 մետր երկարությամբ մետրոկամուրջը: Մետրոյի նոր ուղին կմիացնի Հրազդանի կիրճով բաժանված Երևանի երկու մասերը:

3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեության նախագծման և շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանությանը, այդ օրենսդրությունից բխող ՀՀ կառավարության որոշումներով: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Հողային օրենսգիրք (02.05.2001թ.)
3. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.)
4. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (28.11.2011 թ.)
5. Թափոնների մասին ՀՀ օրենք (24.11.2004 թ.)
6. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք (07.02.2012թ.)
7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (01.11.1994թ.)
8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (ՀՕ-150-Ն 09.06.2023թ.):
9. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին ՀՀ օրենք (11.11.1998 թ. ՀՕ 261):
10. ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին ՀՀ օրենք (11.04.2003թ.)

11. ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (15.03.2007թ. N 385-Ն, հավելված N1),
12. ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (07.10.2004թ. N 1616-Ն),
13. ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշում "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին":
14. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
15. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրաման ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարաի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
16. ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնմանև օգտագործման կարգը հաստատելու մասին»:
17. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
18. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
19. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
20. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
21. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
22. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
23. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
24. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,
25. ՀՀ կառավարության 08.09.2011 թվականի N 1396-Ն որոշումը Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 19.09.2002 թվականի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 12.04.2001 թվականի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

26. ՀՀ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012 թվականի N 405-Ն որոշումը Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին:

Հայաստանի հանրապետությունը վավերացրել է նաև մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ, որոնք հասանելի են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կայքում՝ http://www.env.am: Դրանց շարքում է նաև ՄԱԿ-ի ԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին, հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան (Օրհուս, 1998թ.):

4. ԲՆԱԿԱՆ և ՏԵԽՆՈԳԵՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

4.1. Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:


Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2022 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: 2022 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 31%-ում դիտվել են փոշու, 29%-ում՝ ազոտի երկօքիդի, 3%-ում՝ ծծմբի երկօքիդի, 0.1%-ում՝ գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման

աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: 2021 թվականի տվյալների համաձայն քաղաքում անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերում գերակշռում են ածխաջրածինները, ածխածնի օքսիդը, փոշին, ազոտի օքսիդները և ծծմբային անհիդրիդները[6]:


Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2022թ.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ³
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (5)	0.090 (դիտ. N18)	52	0	0.022	0.05
Ազոտի երկօքսիդ (5)	0.148 (դիտ. N7)	367	0	0.029	0.04
Փոշի (5)	1.805 (դիտ. N8)	560	15	0.147	0.15
Գետնամերձ օզոն (5)	0.030 (դիտ. N8)	1	0	0.006	0.03




Գծապատկեր 18. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.


[6] Ամփոփագիր «Հայաստանի Հանրապետության տարածքում 2022թ. մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին»: ՀՀ ՇՄՆ Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ




Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները


Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն
2022 / ԵՐԵՎԱՆ
Ավան
Դավթաշեն
Աջափնյակ
Արարկիր
Քանաքեռ-Զեյթուն
Նոր Նորք
Մալաթիա-Սեբաստիա
Կենտրոն
Էրեբունի
Շենգավիթ
Նուբարաշեն
Ջովաշեն (Ազատ)
M-1
M-5
M-15
H-3
H-4
H-8
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ակտիվ ինքնաշխման դիտակայաններ
Պասիվ ինքնաշխման դիտակետեր
Արդյունաբերություն
Գետային ցանց
Հանրապետական ցանց
Տեղական նշանակության
Միջպետական նշանակության
Երկաթուղային ցանց
Լճեր և ջրամբարներ
Բնակավայրեր
Բնակավայրի սահման
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
0 0.45 0.9 1.8 2.7 3.6 կմ


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն
2022 / ԵՐԵՎԱՆ
N
Դավթաշեն
Աջափնյակ
Արաբկիր
Ավան
Քանաքեռ-Զեյթուն
Նորք-Մարաշ
Նոր Նորք
Մալաթիա-Սեբաստիա
Կենտրոն
Էրեբունի
Շենգավիթ
Նուրնուս
Ջրվաշեն (Ազատ)
Ազատ
M-1
M-4
M-5
H-3
H-14
H-8
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)
0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07
0 0.475 0.95 1.9 2.85 3.8 կմ

4.2. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդանի Ջրավազանային Կառավարման Տարածքը (ՋԿՏ) ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:


2022 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 35%-ում՝ 3-րդ դաս, 5%-ում՝ 4-րդ դաս և 55%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:

Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2021 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1183.3 մլն մ3, որից 38%-ը բաժին է ընկնում մակերևութային, 62%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (39%), արտադրական (9%) և խմելու (5%) նպատակներով:

Հրազդան գետի ջրի որակը Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Գեղանիստ գյուղի մոտ, և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Քաղսի գյուղից ներքև և գետաբերանում՝ պայմանավորված ամոնիում իոնով և


վանադիումով, Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդանհուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:



Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով[7]:

[7] Ամփոփագիր «Հայաստանի Հանրապետության տարածքում 2022թ. մակերևութային ջրերի որակի»: ՀՀ ՇՄՆ Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



4.3. Հողեր

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ✓ Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ✓ Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ✓ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող ոչ պիտանի հողային հանույթը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որտեղից էլ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված/համաձայնեցված վայր[8]:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

Ծրագրի իրականացման տարածքի հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խառը կառուցապատման է: Ծրագրի իրականացման տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տվյալները պաշտոնական տեղեկագրերում բացակայում են, նաև մինչ այժմ ծրագրի իրականցման տարածքում որևէ արտադրական և/կամ գյուղատնտեսական գործունեություն չի իրականացվել, ուստի ծրագրի իրականացման տարածքի հողերը աղտոտված չեն կարող լինել:

4.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Ինժեներաերկրաբանական եզրակացություն Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Երևանի մարզի Երևան քաղաքի Աչապնյակ և Արաբկիր համայնքների վարչական տարածքների սահմանային մասում, Հրազդան գետի աջ և ճախ ափերին:

Տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Նախկինում տվյալ և հարակից տարածքներում տարբեր նախագծա-հետազոտական և գիտա-արտադրական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների հաշվետու նյութերի հավաքում, վերլուծություն և ընդհանրացում:

[8] Երևան քաղաքի «Կանաչ Քաղաք» գործողությունների ծրագիր, Երևան 2017թ.

- ✓ Հավաքած նյութերի կամերալ մշակում և սույն եզրակացության կազմում:

Ըստ ՀՀՇՆ II 7.01-2011 նորմատիվային փաստաթղթի՝ Երևան քաղաքի արածքը համարվում է ցածրադիր և ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով խիստ ցամաքային կլիմա:

- ✓ Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +41^{0}C:
- ✓ Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է - 21^{0}C:
- ✓ Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 400 մմ:
- ✓ Գերակշռում են 2.0 մ/վրկ արագության հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 20 մ/վրկ արագության (ուժգնության) քամիներ:
- ✓ Ձյան ծածկոցի հաստությունը հասնում է 58 սմ, ճնշումը՝ 70 կգ/մ^2:
- ✓ Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 54 սմ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Հրազդան գետի միջին հոսանքի աջափնյա լանջի սահմաններում: Հրազդան գետի աջ ափին և զբաղեցնում Եղվարդի սարահարթի հարավ-արևելյան եզրամասը: Հրազդան գետի լանջերը զառիթափ են և առանձին տեղերում ունեն 120–150մ խորությամբ կիրճի տեսք:

Ռելիեֆը անհարթ է, մակերևույթի ընդհանուր թեքությամբ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Շրջանի գլխավոր գետն է գ.Հրազդան: Տեղամասի բացարձակ նիշերը տատանվում են 1035.0-1045.0 մետրի սահմաններում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է խիտ, ծակոտկեն, մոխրագույն և մուգ մոխրագույնի ստորին Չորրորդական հասակի բազալտային անդեզիտներով և տրախիբազալտներով, որոնք ունեն 20-60մ միջին հզորություն: Նշված բազալտները առաջացնում են ընդարձակ ծածկոց կազմված լավային արտահոսքեր, որոնք և ձևավորել են Կոտայք-Եղվարդ սարահարթի լավային շերտախումբը: Նրանց կառուցվածքը լավ երևում է Հրազդան գետի կիրճում: Լավաները ծածկված են Չորրորդական և ժամանակակից, էլյուվիալ, դելյուվիալ, ալյուվիալ խոշոռաբեկորային, խճային, ավազակավային, կավավազային և կոպճային գոյացումներով:

Ստորև տրվում է տեղամասի նկարագրությունը և երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների արժեքները ըստ ֆոնդային տվյալների:

Գրունտի հաշվարկված էլեկտրական դիմադրողականության արժեքները առաջարկվում է ընդունել 2000 Օմ:

0.0-1.0 Լիցքային և ավազակավային գրունտներ, որոնք չեն կարող հանդիսանալ որպես հիմնատակ և ենթակա են հեռացման:, § 24-ա, աղյ.1-1 (ՇՆևԿ IV-2-82) II կարգ, ρ-1800կգ/մ^3 1.0

1.0-1.7 խճային գրունտ, § 13 աղյ.1-1 (ՇՆևԿ IV-2-82), IV կարգ, ρ-1800կգ/մ^3 0.9

1.7-3.0 ճալաքարա-կոպճային գրունտ § 6-գ, աղյ.1-1 (ՇՆևԿ IV-2-82), IV կարգ, ρ-2000կգ/մ^3 1,3

3.0-10.0 բազալտ, §19, աղյ.1-1(ՇՆևԿ IV-2-82), VII կարգ, ρ-2600կգ/մ^3 7.0

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորերկրյան ջրերը տեղադրված են 10 մ-ից խորը:

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ չեն դիտվել:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 շրջանը և տեղամասը մտնում են II սեյսմիկ գոտում (Amax = 0.4g): Տեղամասի գրունտային պայմանների գործակիցը (K_0) կկազմի 1.0: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝

$$A_{max} = 0.4g \times 1.1 = 0.4g$$

Միաժամանակ նշում ենք, որ տվյալ եզրակացությունը կարող է ծառայել միայն Երևան քաղաքի տարածքի գոտիավորման նախագծի մշակման համար: Այն չի կարող օգտագործվել առանձին շենքերի ու կառույցների նախագծման համար:

5. ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հրազդանի կիրճը Երևան քաղաքի համար ունի կարևոր բնապահպանական նշանակություն իր ուրույն կենսաբազմազանությամբ, որը տարիներ շարունակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Երևան քաղաքի տարածքում Հրազդան գետի կիրճում քաղաքային անտրոպոգեն մեծ ազդեցությունների պայմաններում դեռևս կարելի է գտնել բնական հարուստ կենսաբազմազանություն: Տարածքի բարդ գեոմորֆոլոգիական (երկրաձևաբանական) կառուցվածքը թերևս թույլ չի տվել ամբողջությամբ կառուցապատել այն: Կիրճում առկա են ինչպես երկրաբանական, բնական և պատմամշակութային հուշարձաններ, այնպես էլ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ, այդ թվում՝ կարմիրգրքյան տեսակներ: Կիրճի ստորին և վերին մասերում առկա են գետամերձ անտառների ժապավենաձև բնական գոտիներ, որոնցից վեր զարգացած է լեռնատափաստանային հարուստ բուսականությունը: Կիրճի մի մասը սակայն զերծ չէ մոլախոտային և ինվազիվ բուսականության բացասական ազդեցությունից, որոնցից ամենաակնառուն Երկնածառ բարձրաբուն (Այլանթ) ծառատեսակի առաջացրած բուսուտներն են, որոնք տարեցտարի ավելի են մեծացնում իրենց տարածքները, ագրեսիվ կերպով դուրս մղելով աբորիգեն տեսակներին:

Հրազդանի կիրճում հանդիպում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված խոցելի կենդանատեսակներ՝ 5 տեսակի անողնաշարավոր կենդանիներ, 2 տեսակի մողեսներ, 3 տեսակի օձեր, 8 տեսակի թռչուններ և 2 տեսակի կաթնասուններ (չղջիկներ):

Վերջին տարիներին կառուցապատման հետևանքով էականորեն դեգրադացվել են կիրճի բնական լանդշաֆտները և կրճատվել են հազվագյուտ և անհետացող տեսակների ապրելավայրերը:

Կիրճի Երևանյան հատվածում, ինչպես նաև Հրազդան գետի Կոտայքի մարզի Ջովունի, Քանաքեռավան, Վերին Պտղնի, Գետամեջ և Արզնի գյուղական բնակավայրերի հատվածներում դեռևս պահպանվել են արժեքավոր բնական էկոհամակարգեր, որոնք կարևոր նշանակություն ունեն քաղաքի կայուն և հետևողական զարգացման համար:

Անհրաժեշտ է համապատասխան ուսումնասիրություններ իրականացնել Հրազդանի կիրճում՝ մասնավորապես գնահատելու համար հետևյալ բնապահպանական արժեքները՝

1. վտանգված էկոհամակարգերի առկայությունը,
2. հազվագյուտ, անհետացող կամ վտանգված բուսական և (կամ) կենդանական տեսակների առկայությունը,
3. Հայաստանի Կարմիր գրքում և/կամ Բնության պահպանության միջազգային միության կարմիր ցուցակում գրանցված բուսական և/կամ կենդանական տեսակների առկայությունը,
4. կենդանիների բնադրավայրերի, միգրացիոն ուղիների, տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերի առկայությունը,
5. հարուստ կենսաբազմազանության առկայությունը,
6. էնդեմիկ և ռելիկտ տեսակների առկայությունը,
7. մարդածին ազդեցության չենթարկված՝ անխաթար (կուսական) էկոհամակարգերի առկայությունը:

Նախատեսվող տարածքի հետազոտման և նշված չափորոշիչների գնահատման արդյունքում անհրաժեշտ է իրականացնել քարտեզագրման և սահմանների նկարագրման աշխատանքներ:

5.1. Տարածքի բուսական աշխարհի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքը գտնվում է կիսաանապատային գոտում: Ըստ Ա.Թախտաջյանի ֆլորիստիկ շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954), այն գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, որտեղ բուսականության տիպերից հատուկ է անապատային և կիսաանապատային բուսականությունը:

Հայցվող տարածքը ներառում է Հրազդան գետի կիրճի աջ և ձախ լանջերը ըստ նախագծային քարտեզի:


Գետի ձախակողմյան լանջերը, որտեղից դուրս է գալիս արդեն փորված թունելը, իրենց վրա կրել անտրոպոգեն ազդեցություն, թունելի մակարդակին և դրանից վեր ամբողջ լանջը կառուցված դարավանդներ են, քարերով եզրերը ամրացրած, որտեղ

բուսականությունը բացակայում է: Թունելից ներքև դեպի գետ իջնող լանջը իր վրա կրել է շինարարության ազդեցություն, բուսականությունը բացակայում է, հիշեցնում է քարքարոտ շինհրապարակ: Թունելի հարևանությամբ փոքրիկ գոգավորությունում հանդիպում է թեղի մանրատերև, կան եղեգնուտի փոքրիկ հատված: Լանջի ներքևում ասֆալտե ճանապարհն է:

Հրազդան գետի կիրճի աջակողմյան լանջերը, որտեղից փորվելու է թունելը դեպի Հալաբյան փողոց թեք են, քարքարոտ բացվածքներով: Լանջին հանդիպում են դենդրոֆլորայի ներկայացուցիչներ, ավելի բաց հատվածներում, ուր չկան ծառեր, հանդիպում են կիսանապատային չորասեր բուսականության ներկայացուցիչներ: Լանջի վրա կան համեմատաբար խոնավ հատվածներ ՝ փոքրիկ եղեգնուտով: Թունելի մուտքի փորելու բուն հատվածում մրգատու այգի է, դարավանդով ձևավորած, բազմամյա ծիրանենիներով, կեռասենիներով:

Հրազդան գետը և ափերը ներկայացված են ջրաճահճային բուսականությամբ, հանդիպում են դենդրոֆլորայի ներկայացուցիչներ:

«Աջափնյակ» Երևանի մետրոպոլիտենի կառուցվող կայարանը պետք է միանա այժմ գործող «Բարեկամություն» կայարանին՝ Հալաբյան փողոցից դեպի Հրազդան գետի կիրճի աջ լանջին թունելի ելքով, ապա, Հրազդան գետի վրա կառուցվող կամուրջով և Հրազդան գետի կիրճի ձախ լանջին՝ դեպի Մերգելյան ինստիտուտի ուղղությամբ փորված թունելով:



Նկ.1 «Բարեկամություն» կայարանի կողմից դեպի Հրազդանի կիրճ դուրս եկող թունելներ ՝ կիրճի ձախակողմյան լանջ



Նկ.2 Հրազդանի կիրճից դեպի Հալաբյան փողոց փորվելիու թունելի մուտքի համար նախատեսված հատված

Դեպի «Աջափնյակ» կայարան տանող թունելները փորվել են դեռևս Խորհրդային Միության տարիներին: Կառուցվելու դեպքում կօգտագործվի այժմ փորված թունելներից միայն մեկը՝ Մերգելյան ինստիտուտից դեպի Հրազդանի ձախ ափ, իսկ աջ ափից պետք է փորվի նոր թունել՝ Թումանյանի այգու հարևանությամբ՝ դեպի Հալաբյան փողոց:


Կիրճի ձախակողմյան լանջին հանդիպում են Դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa L.), Սեզ սողացող (Elytrigia repens (L.) Nevski), Անապատասեզ հեռացած (Eremopyrum distans (K.Koch) Nevski), Առվույտ ցանովի (Medicago sativa L.), Եղջրագլխիկ մահակաձև (Ceratocephalus falcatus (L.) Pers.), Արևադարձ էլիպսաձև (Heliotropium ellipticum Ledeb.), Փիթերթ մերկ (Malva neglecta L.), Ջուգատերև սովորական (Zigophyllum fabago L.), Տատաշ փռվող (Tribulus terrastris L.) և այլ բուսատեսակներ:

Թունելի հարևանությամբ փոքրիկ գոգավորությունում հանդիպում է թեղի մանրատերև, կան եղեգնուտի փոքրիկ հատված: Լանջի ներքևում ասֆալտե ճանապարհն է:

Հրազդան գետի աջակողմյան լանջը ավելի հարուստ է բուսատեսակներով: Դենդրոֆլորայի ներկայացուցչներից հանդիպում է Ուռենի բարձր (Salix excelsa Gmel.), Սզնի հովիարատերև (Crataegus rhipidiphylla Gand.), Թթենի սպիտակ (Morus alba L.), Հացենի սովորական (Fraxinus excelsior L.), Թխկի հացենատերև (Acer negundo L.), Թեղի մանրատերև (Ulmus minor Mill.), Դժնիկ քաղցր (Rhamnus pallasii Fisch. et C.A.Meyer): Կա խոնավ հատված՝ փոքրիկ եղեգնուտով Եղեգ հարավայինի (Fragmites australis (Cav.) Trin. Ex Steud.) մասնակցությամբ: Խոտաբույսերից հանդիպում է Թելուկ սպիտակ (Chenopodium album L.), Գետնաստղ կպչուն (Asperula aparine M.Bieb.), Տորոն ներկատու (Rubia tinctorium L.), Հավակատար սովորական (Amaranyhus retroflexus L.), Սեզ սողացող (Elytrigia repens (L.) Nevski), Կոտեմ վայրի (Lepidium draba L.), Ջուգատերև սովորական (Zigophyllum fabago L.), Տատաշ փռվող (Tribulus terrastris L.), Պատատուկ նեղատերև (Convolvulus lineolatus L.), կապար փշոտ (Capparis spinosa L.), Կաթնուկ կողմնացույց (Lactuca serriola L.), Մատիտեղ ճնճղուկի (Polygonum aviculare L.), Գայլուկ սովորական (Humulus lupulus L.), Եզան լեզու նշտարատերև (Plantago lanceolate L.), Տուղտավարդ կնճռոտ (Alcea rugisa Alef.) և այլն:

Ափամերձ տարածքում դենդրոֆլորայի ներկայացուցիչներից հանդիպում են Ուռենի բարձր (Salix excelsa Gmel.), Բարդի բրգաձև իտալական (Populus nigral. var italica), Սզնի հովիարատերև (Crataegus rhipidiphylla Gand.), Թթենի (Morus alba), Հացենի սովորական (Fraxinus excelsior), Թխկի հացենատերև (Acer negundo L.), Թեղի մանրատերև (Ulmus minor Mill.):

Խոնավ հատվածներում և ջրի անմիջական հարևանությամբ խոտաբույսերից հանդիպում են Եղինջ երկտուն (Urtica dioica L.), Գայլուկ սովորական (Humulus lupulus L.) Լավատեր թուրինգիական (Lavatera thuringiaca L.), Շնախոտ սուր (Cynanchum acutum L.), Պատատուկ դաշտային (Convolvulus arvensis L.) և այլն:

Նկ.3-4 Հրազդան գետը ափամերձ բուսականությամբ

Կարմիր գրքում գրանցված տեսակներ

Երևանի ֆլորիստիկ շրջանում կան Կարմիր գրքում գրանցված 33 բուսատեսակ:

Դրանցից են Խնկեղեգ ճահճային (Acorus calamus L.), Տուղտավարդ Սոֆիայի (Alcea sophiae Iljin), Օշան Թամամշյանի (Salsola tamamschjanae Iljin), Գազ տարօրինակ (Astragalus paradoxus Bunge), Կորնգան հայաստանյանը (Onobrychis hajastana Grossh.), Մատուտակ խոզանավոր (Glycyrrhiza echinata L.), Կարմրան ութառէջը (Tamarix octandra Bunge) և այլն:

1984 թվականի մայիսի 30-ին Վրեժ Մանակյանի կողմից Հրազդան գետի կիրճից հավաքվել է Ասպերուգինոիդես անութային (Asperuginoides axillaris (Boiss. et Hohen.) Rauschert) բուսատեսակը, որը գրանցված է ՀՀ Բույսերի կարմիր գրքում: Բուսաբանության ինստիտուտի herbarium-ում պահվող տվյալ բույսի պիտակի վրա նշված է, որ այն հավաքվել է Հրազդանի կիրճի Հրազդան կամուրջի և Երևանյան լճի միջև գտնվող հատվածից:

Նախնական ուսումնասիրությունների արդյունքում գործունեության իրականացման նախատեսվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված Ասպերուգինոիդես անութայինը կամ այլ կարմիրգրքային բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Կենսաբանական գիտությունների թեկնածու *Մերինե Սարգսյան*

5.2. Տարածքի կենդանական աշխարհի համառոտ նկարագրություն

Վերը նկարագրված բնական լանդշաֆտտ և բուսականությունը հիմնականում կանխորոշում են հետազոտվող տարածքում հանդիպող ողնաշարավոր և անողնաշար կենդանիների տեսակային կազմը:

Սույն հաշվետվության համար հատկացված սեղմ ժամկետները թույլ չտվեցին իրականացնել տարածքի մանրամասն դաշտային ուսումնասիրություն, ուստի հաշվետվության մեջ օգտագործվել են հետազոտվող տարածքին վերաբերող անցյալ տարիների կատարված հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև առկա գիտական նյութեր, որոնք որևէ կերպ առնչվում են հետազոտվող տարածքի հետ (գիտական հոդվածներ, տարբեր զեկուցումներ, Կենդանաբանության ինստիտուտի ժողովածուներ):

Ելնելով վերոնշյալից, կազմվել են ողնաշարավոր և անողնաշար կենդանիների նախնական ցուցակներ, որոնց հանդիպումը տարածքում հավանական է (Աղյուսակներ 5,6,7,8 և 9): Բոլոր աղյուսակներում նշված են միջազգային ԲՊՄՄ Կարմիր ցուցակում և Հայաստանի Կարմիր գրքում ներառված տեսակները:

5.2.1. Թռչուններ

Աղյուսակ 5. Հետազոտվող տարածքում հանդիպող թռչունների տեսակների ցանկը ըստ գրականության տվյալների

№	Family	Armenian names	English names	Scientific names	RA RB*
1.	Podicipedidae	Փոքր սուզակ	Little Grebe	Tachybaptus ruficollis	
2.	Ardeidae	Փոքր ջրցուլ	Common Little Bittern	Ixobrychus minutus	
3.	Anatidae	Մոխրագույն բադ	Gadwall	Mareca strepera	
4.	Accipitridae	Լորաճուռակ	Eurasian Sparrowhawk	Accipiter nisus	
5.	Accipitridae	Եվրոպական ճնճղաճուռակ	Levant Sparrowhawk	Accipiter brevipes	V
6.	Falconidae	Սովորական հողմավար բազե	Common Kestrel	Falco tinnunculus	
7.	Falconidae	Աղավնաբազե	Merlin	Falco columbarius	V
8.	Falconidae	Սապսան	Peregrine Falcon	Falco peregrinus	V
9.	Rallidae	Եղեգնահավ	Common Moorhen	Gallinula chloropus	
10.	Scolopacidae	Մորակտցար	Common Snipe	Gallinago gallinago	
11.	Scolopacidae	Սևուկ կտցար	Green Sandpiper	Tringa ochropus	
12.	Laridae	Սովորական որոր	Black-headed Gull	Larus ridibundus	
13.	Laridae	Հայկական որոր	Armenian Gull	Larus armenicus	V
14.	Columbidae	Թխակապույտ աղավնի	Rock Pigeon	Columba livia	
15.	Columbidae	Փոքր տատրակ	Laughing Dove	Spilopelia senegalensis	
16.	Strigidae	Եվրոպական բվիկ	Common Scops-owl	Otus scops	
17.	Strigidae	Բվեճ	Eurasian Eagle-owl	Bubo bubo	V
18.	Apodidae	Սև մանգաղաթև	Common Swift	Apus apus	

19.	**Alcedinidae**	Երկնագույն ալկիոն	Common Kingfisher	Alcedo atthis	
20.	**Meropidae**	Ոսկեգույն մեղվակեր	European Bee-eater	Merops apiaster	
21.	**Upupidae**	Հոպոպ	Eurasian Hoopoe	Upupa epops	
22.	**Picidae**	Սիրիական փայտփոր	Syrian Woodpecker	Dendrocopos syriacus	
23.	**Hirundinidae**	Ժայռային ծիծեռնակ	Eurasian Crag-martin	Hirundo rupestris	
24.	**Hirundinidae**	Գյուղական ծիծեռնակ	Barn Swallow	Hirundo rustica	
25.	**Hirundinidae**	Քաղաքային ծիծեռնակ	Northern House-martin	Delichon urbicum	
26.	**Motacillidae**	Սպիտակ խաղտտնիկ	White Wagtail	Motacilla alba	
27.	**Cinclidae**	Ջրաճնճղուկ	White-throated Dipper	Cinclus cinclus	
28.	**Muscicapidae**	Սևուկ կարմրատուտ	Black Redstart	Phoenicurus ochruros	
29.	**Muscicapidae**	Սովորական քարաթռչնակ	Northern Wheatear	Oenanthe oenanthe	
30.	**Turdidae**	Սև կեռնեխ	Eurasian Blackbird	Turdus merula	
31.	**Paridae**	Մեծ երաշտահավ	Great Tit	Parus major	
32.	**Corvidae**	Սովորական կաչաղակ	Black-billed Magpie	Pica pica	
33.	**Corvidae**	Սովորական ճայ	Eurasian Jackdaw	Corvus monedula	
34.	**Corvidae**	Մոխրագույն ագռավ	Hooded Crow	Corvus corone	
35.	**Sturnidae**	Վարդագույն սարյակ	Rosy Starling	Sturnus roseus	
36.	**Passeridae**	Տնային ճնճղուկ	House Sparrow	Passer domesticus	
37.	**Fringillidae**	Ամուրիկ	Eurasian Chaffinch	Fringilla coelebs	

**RA RB – Հայաստանի Կարմիր գիրք*

Ինչպես երևում է Աղյուսակ 5-ից, այս տարածքում կարելի է հանդիպել 25 ընտանիքի պատկանող թռչունների 37 տեսակ: Ճնճղուկազգիները կազմում են ամենամեծ խումբը: Երկրորդը ամենամեծ խումբը գիշատիչ թռչուններն են, որոնցից Աղավնաբազեն կարող է հանդիպել միայն ձմռան ամիսներին, քանի որ ձմեռող տեսակի կարգավիճակ ունեցող տեսակ է Հայաստանում: Հետազոտվող տարածքում թռչունների տեսակներից որոնց հանդիպումը հետազոտվող տարածքում հավանական է, միայն 6 տեսակ կարող է դասվել բնադրող տեսակների շարքին: Սրանք են՝ Եղեգնահավը, Եվրոպական բվիկը, Հոպոպը, Սպիտակ խաղտտնիկը, Սև կեռնեխը, Մեծ երաշտահավը և Տնային ճնճղուկը: Ընդ որում պետք է հաշվի առնել որ Եղեգնահավը ջրաճահճային տեսակ է և նրա կենսամիջավայրը ներառում է անմիջապես գետի ափամերձ տարածքում աճող բուսածածքը: Այլ բնադրող տեսակները հանդիպում են թփուտային բուսածածկույթով լանջերին կամ փոքր ծառածածկ տարածքներում:

Թռչնատեսակների այլ խմբեր կարող են պարբերաբար այցելել այս տարածքը կամ հանդիպել կիրճի վրայով թռչելիս, ինչպես օրինակ՝ Սովորական որորը և Սև մանգաղաթևը, կամ շատ կարճ ժամանակով հայտնվել տարածքում կեր հայթհայթելու նպատակով, օրինակ՝ Լորաճուռակը, Գյուղական ծիծեռնակը:

Այս տարածքում հավանական հանդիպում ունեցող թռչնատեսակներից 5-ը ընդգրկված է Հայաստանի Կարմիր գրքում և բոլորը պարբերաբար հանդիպում են կիրճի այս հատվածում:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի գիտաշխատող Լյուբա Բալյան

5.2.2. Կաթնասուններ

Աղյուսակ 6. Հետազոտվող տարածքում հանդիպող կաթնասունների տեսակների ցանկը ըստ գրականության տվյալների

	Genus	Species	Author	Armenian Name	English name	RA RB*
Erinacedae						
1	Erinaceus	concolor	Martin, 1838	Սպիտակափորն ոզնի	Southern white-breasted hedgehog	
Rhinolophidae						
2	Rhinolophus	blasii	Peters, 1867	Միջերկրածովային պայտաքիթ չղջիկ	Blasius's horseshoe bat	V
Vespertilionidae						
3	Myotis	Davidii (mystacinus)	(Peters, 1869)	Բեղլու գիշերային չղջիկ	Whiskered bats	
4	Miniopterus	schreibersi	Kuhl, 1819	Սովորական երկարաթև չղջիկ	Schreibers' Bent-winged Bat;	V
Mustelidae						
5	Martes	Foina	Erxleben, 1777	Քարակզաքիս	Beech marten	
Canidae						
6	Canis	Aureus	Linnaeus, 1758	Չախկալ, սովորական շնագայլ	Jackal, Golden jackal	
7	Vulpes	vulpes	Linnaeus, 1758	Սովորական աղվես	Fox	
Sciuridae						
8	Sciurus	anomalus	Gmelin, 1778	Կովկասյանկամ Պարսկական սկյուռ	Caucasian or Persian squirrel	
Cricetidae						
9	Cricetulus	migratorius	Pallas, 1773	Գորշ համստերիկ մոխրագույն	Gray dwarf hamster	
10	Arvicola	terrestris	Linnaeus, 1758	Ջրառնետ	European water vole	
11	Microtus	arvalis	Pallas, 1778	Սովորական դաշտամուկ	Common vole	
Muridae						
12	Rattus	norvegicus	Berkenhout, 1769	Մոխրագույն առնետ	Brown rat	

**RA RB – Հայաստանի Կարմիր գիրք*

Ինչպես երևում է Աղյուսակ 6-ից, կաթնասունների տեսակային կազմը, որոնց առկայությունը հնարավոր է առաջարկվող շինարարական աշխատանքների տարածքում, ներառում է 8 ընտանիքներին պատկանող 12 տեսակ: Ընդ որում,

անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ տեսակներից միայն Սպիտակագլուխ ոզնին, Մոխրագույն համստերիկը, Ջրառնետը, Սովորական դաշտամուկը և Մոխրագույն առնետը կարող են մշտապես բնակվել հետազոտվող տարածքում: Գիշատիչ կաթնասուններն այս տարածքը հիմնականում օգտագործում են որպես տարանցիկ գոտի կամ շատ կարճ ժամանակով հայտնվում են սնունդ հայթայթելու նպատակով: Նույնը վերաբերում է չղջիկների տեսակներին: Մթնշաղին և օրվա գիշերային ժամերին այս տեսակները թռիչքներ են կատարում տարածքում սնունդ (գիշերային կենսակերպ վարող միջատներ) հայթհայթելու համար: Կաթնասունների այն բոլոր տեսակներից, որոնց առկայությունը այս տարածքում հավանական է, միայն Միջերկրածովային պայտաքիթ չղջիկը, Սովորական երկարաթև չղջիկ ընդգրկված Հայաստանի Կարմիր գրքում:

Կենսաբանական գիտությունների թեկնածու *Մամիկոն Ղասաբյան*

5.2.3. Երկկենցաղներ և սողուններ

Աղյուսակ 7. Երևան քաղաքի մետրոպոլիտենի շինարարության Հրազդանի կիրճի նախատեսվող տարածքում երկկենցաղների և սողունների հավանական տեսակների ցանկը ըստ գրականության տվյալների:

Հ/h	Կենդանիների անվանումը		RA RB*
	Armenian names	**Scientific names**	
Երկկենցաղներ – AMPHIBIA			
1	Կանաչ դոդոշ Կարգ- Անպոչ երկկենցաղներ Ընտանիք- Դոդոշներ	Bufo variabilis (Pallas, 1769) - ANURA-Bufonidae	
2	Սովորական ծառագորտ Կարգ Անպոչ երկկենցաղներ Ընտանիք Ծառագորտեր	Hyla orientalis schelkownikowi Cernov,1926- ANURA-Hylidae	
3	Լճագորտ Կարգ Անպոչ երկկենցաղներ Ընտանիք Գորտեր	Pelophylax ridibundus (Pallas, 1771) ANURA-Ranidae	
ՍՈՂՈՒՆՆԵՐ- REPTILIA			
1	Երկարաոտ սցինկ, Կարգ ՄՈՂԵՍՆԵՐ Ընտանիք Սցինկեր	Eumeces schneideri (Daudin, 1802), SAURIA- Scincidae	VU
2	Առաջավորասիական մաբույա Ընտանիք Սցինկեր	Trachylepis septemtaeniata Reuss, 1834- Scincidae	VU
3	Կասպիական գեկոն Ընտանիք Գեկոններ	Cyrtopodion caspium (Eichwald,1831)- Gekkonidae	
4	Կովկասյան ագամա Ընտանիք Ագամաներ	Laudakia caucasia (Eichwald,1831)- Agamidae	
5	Միջին մողես Ընտանիք Իսկական մողեսներ	Lacerta media Lantz et Cyren,1920- Lacertidae	
6	Շերտավոր մողես Ընտանիք Իսկական մողեսներ	Lacerta strigata Eichwald, 1831 - Lacertidae	

7	Նաիրյան մողես Ընտանիք Իսկական մողեսներ	Darevskia nairensis (Darevsky, 1967) Lacertidae	
8	Դեղնափորիկ Ընտանիք Իլիկամողեսներ	Pseudopus apodus (Pallas, 1775) Anguidae	
9	Որդանման կույր օձ Կարգ Օձեր Ընտանիք Կույր օձեր	Typhlops vermicularis Merrem,1820- SERPENTES- Typhlopidae	
10	Արևմտյան վիշապիկ Ընտանիք Կեղծոտանիներ կամ վիշապներ	Eryx jaculus (Linnaeus, 1758) - Boidae	
11	Կարմրափոր սահնօձ կամ շահմար Ընտանիք Լորտուներ	Dolichophis schmidti (Nikolsky, 1909)- *Colubridae*	
12	Ձիթեպտղագույն սահնօձ Ընտանիք Լորտուներ	Platyceps najadum (Eichwald, 1831)- - *Colubridae*	
13	Կապարագույն սահնօձ Ընտանիք Լորտուներ	Hemorrhois nummifer (Reuss, 1834)- *Colubridae*	
14	Անդրկովկասյան սահնօձ Ընտանիք Լորտուներ	Zamenis hohenackeri (Strauch, 1873) - *Colubridae*	VU
15	Վզնոցավոր էիրենիս Ընտանիք Լորտուներ	Eirenis collaris (Menetries, 1832)- *Colubridae*	
16	Հայկական էիրենիս Ընտանիք Լորտուներ	Eirenis punctatolineatus (Boettger,1892) - *Colubridae*	
17	Սովորական լորտու Ընտանիք Լորտուներ	Natrix natrix (Linnaeus,1758) - *Colubridae*	
18	Ջրային լորտու Ընտանիք Լորտուներ	Natrix tesselata (Laurenti,1768) - *Colubridae*	
19	Կովկասյան կատվաօձ, Կարգ ՕՁԵՐ, Ընտանիք Լորտուներ	Telescopus fallax (Fleschmann, 1831),SERPENTES, Colubridae	VU
20	Կովկասյան գյուրզա Ընտանիք Իժեր	Macrovipera (Vipera) lebetina (Linnaeus, 1758)- Viperidae	

Հրազդանի կիրճի նախատեսվող շինարարության տարածքում երկկենցաղների և սողունների հավանական տեսակներից 4-ը /մողսների 2 և օձերի 2 տեսակներ/ գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում «Խոցելի» կարգավիճակով: Բոլոր նշված տեսակները նախընտրում են լեռների և նախալեռների նոսր, չորասեր բուսականությամբ ծածկված քիչ թե շատ թեք քարքարոտ լանջերիը, ժայռերի վրա քարերի ջարդվածքները:

Կենսաբանական գիտությունների թեկնածու *Վրամ Աղասյան*

5.2.4. Ձկներ

Աղյուսակ 8. Հետազոտվող տարածքում հանդիպող ձկների տեսակների ցանկը ըստ գրականության տվյալների

№	Family	Armenian names	English names	Scientific names
38.	Cyprinidae	Կուրի կողակ	Khramicarp (Caucasian Scraper)	*Capoeta capoeta* Guldenstadt 1772
39.	Cyprinidae	Կուրի բեղաձուկ	Kura barbell	*Barbus lacerta cyri* De Filippi 1985
40.	Cyprinidae	Արևելյան տառեխիկ	Kura chub	*Alburnoides eichwaldii* De Filippi 1863
41.	Cyprinidae	Արծաթափայլ կարաս	Gibel (Prussian) carp	*Carassius gibelio* Bloch 1782
42.	Cyprinidae	Ամուրյան նրբաձուկ	Stone moroko	*Pseudorasbora parva* Temminck and Schlegel 1846
43.	Nemacheilidae	Անգորական լերկաձուկ	Angora loach	*Oxynoemacheilus angorae* Steindachner, 1897
44.	Salmonidae	Կարմրախայտ	Brown trout	*Salmo trutta* Linnaeus 1758

Ինչպես երևում է Աղյուսակից, այս տարածքում կարելի է հանդիպել 3 ընտանիքի պատկանող ձկների 7 տեսակ: Ծածանայինների ընտանիքը կազմում է ամենամեծ խումբը, իսկ լերկաձկնայինների և սաղմոնայինների ընտանիքներից միայն մեկական տեսակ: Նշված ձկնատեսկներից առավել բարձր հանդիպման հաճախականություն են ունեցել արևելյան տառեխիկը, կուրի կողակը և արծաթափայլ կարասը:

Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել առկա գրականական տվյալները և այլ նպատակներով իրականացված հետազոտությունների արդյունքները: Նշված ձկնատեսակներից ոչ մեկը գրանցված չէ Հայաստանի Կարմիր գրքում:

Կենսաբանական գիտությունների թեկնածու *Տիգրան Վարդանյան*

5.2.5. Անողնաշար կենդանիներ

Հրազդանի կիրճի անողնաշար կենդանիների ֆաունայի վերաբերյալ տվայլները խիստ սուղ են: Չկան աշխատանքներ, նվիրված անմիջապես այս տարածքի ֆաունային: Ուստի, մեր վերլուծության համար հիմք են հանդիսացել գրականությունից հասանելի տվյալներ, որոնք վերաբերվում են Երևան քաղաքի և նրան անմիջականորեն հարող տարածքներին՝ կիրճին բնորոշ նմանատիպ էկոհամակերգերի հետ կապված կենդանատեսակների մասին:

Տիպ Փափկամարմիններ – Mollusca

Փափկամարմինների տիպին պատկանող տեսակները, որոնք կարող են հանդիպել Հրազդանի կիրճում 32-են, որոնք պատկանում են 2 դասի, 5 կարգի և 14 ընտանիքների: Սրանցից 12-ը հանդիսանում են ջրհոսքերի բնակիչներ, իսկ 20-ը կապված են կիսաանապատային էկոհամակարգերի, կանաչապատման ծառատեսակների և այգիների հետ: Միայն մեկ տեսակ, Cecilioides raddei (Boettger, 1879) կոնկրետ նշվել է կիրճի համար (Акрамовский, 1976):

Կիրճում ՀՀ Կարմիր գրքում գրանցված փափակամարմիններ չեն հայտնաբերվել:

Տիպ Հոդվածոտանիներ – Arthropoda, Դաս Միջատներ – Insecta

Որպես ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ) խմբեր ընտրվել են բզեզների կարգը (Coleoptera) և ցերեկային թիթեռների ենթակարգը (Lepidoptera: Rhopalocera), որոնց վերաբերյալ առկա են գրական տվյալներ: Նրաց վերլուծության արդյունքում վերհանված տվյալները ընդհանրեցված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Հրազդանի կիրճում հնարավոր բզեզների և ցերեկային թիթեռների ընտանիքների տեսակների քանակը:

	Կարգաբանական խմբեր	Տեսակների քանակը	Գրական աղբյուրը
Կարգ Բզեզներ – Coleoptera			
1.	Ընտանիք Գնայուկ բզեզներ – Carabidae	35	Яблоков-Хнзорян, 1976
2.	Ընտանիք Histeridae	5	Калашян, Фаградян, 2017
3.	Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae	25	Яблоков-Хнзорян, 1967
4.	Ընտանիք Glaphyridae	2	Яблоков-Хнзорян, 1967
5.	Ընտանիք Չրխկաններ – Elateridae	8	Марджанян, 1986
6.	Ընտանիք Ոսկեբզեզներ – Buprestidae	12	Калашян, 1987
7.	Ընտանիք Սևամարմիններ –Tenebrionidae	8	Nabozhenko et al., 2021
8.	Ընտանիք Թարախահաններ – Meloidae	5	Яблоков-Хнзорян, 1983
9.	Ենթաընտանիք ընդակերներ– Chrysomelidae:Bruchidae	6	Карапетян, 1985
10.	Ընտանիք Երկարաբեղիկներ – Cerambycidae	12	Плавильщиков, 1948
11.	Ընտանիք Brentidae	5	Тер-Минасян, 1947
12.	Ընտանիք Փղիկներ – Curculionidae	45	Тер-Минасян, 1947
	Ընդամենը բզեզներ	*168*	
Ցերեկային թիթեռներ – Lepidoptera: Rhopalocera			
1.	Ընտանիք Հաստագլուխներ – Hesperiidae	1	Tuzov et al., 1997
2.	Ընտանիք Արագաստաթիթեռներ - Papilionidae	1	Tuzov et al., 1997
3.	Ընտանիք Ճերմակաթիթեռներ – Pieridae	8	Tuzov et al., 1997

4.	Ընտանիք Նիմֆալիդներ – Nymphalidae	9	Tuzov et al., 2000
5.	Ընտանիք Կապտաթիթեռներ – Lycaenidae	11	Tuzov et al., 2000
	Ընդամենը թիթեռներ	*30*	

Այսպիսով, Հրազդանի կիրճում հնարավոր է 168 տեսակի բզեզների և 30 տեսակի ցերեկային թիթեռների առկայությունը: Սրանցից միայն 7 տեսակի սևամարմին բզեզներ (Pachyscelis musiva (Fald.), Tentyria tessulata tessulata Tausch., Opatrum sabulosum sabulosum (L.), Dissonomus picipes (Fald), Armenohelops armeniacus Nabozh., Nalassus faldermanni (Fald.), Hedyphanes tagenioides Fald.) նշված են Հրազդանի կիրճից (Nabozhenko et al., 2021): Կոնկրետ տեղամասի ֆաունայի կազմը բացահայտելու համար անհրաժեշտ են դաշտային հետազոտություններ:

Անմիջապես հետազոտվող տարածքից չի հիշատակվել ՀՀ Կարմիր գրքում գրանցված որևէ տեսակ, սակայն այտեղ կարող են հանդիպել երկու տեսակի իլիկաթիթեռներ (ընտանիք Sphingidae)՝ Proserpinus proserpina L. և Hyles hippophaes Esp., ինպես նաև սևամարմին բզեզ (ընտանիք Tenebrionidae) Armenohelops armeniacus Nabozh. (Աղապյան, Քալաշյան (խմբ.), 2010):

Կենսաբանական գիտությունների թեկնածու *Մարկ Քալաշյան*

5.3. Նկարներ

Հայցվող տարածքում հանդիպող բուսատեսակներ



Արևադարձ էլիպսաձև



Կապար փշոտը



Գայլուկ սովորական



Թխկի հացենատերև



Բարդի բրգաձև իտալական



Թթենի սպիտակ



Կաթնուկ կողմնացույց



Ջուգատերև սովորական



Հավակատար սովորական



Տատաշ փռվող



Տորոն ներկատու



Շնախոտ սուր

Հայցվող տարածքում հանդիպող կենդանական աշխարհի ներկայացուցիչները



Սևուկ կարմրատուտ



Բվեճ



Ժայռային ծիծեռնակ



Երկնագույն ալկիոն



Եվրոպական ճնճղաճուռակ



Հոպոպ



Սպիտակափորն ոզնի



Սովորական աղվես



Կովկասյան կամ Պարսկական սկյուռ



Սովորական դաշտամուկ



Բորզաբզեզ Protatetia funebris (Scarabaeidae)



Ոսկեբզեզ Julodis andreae (Buprestidae)



Ծաղկեփոշեկեր Omophlus caucasicus (Tenebrionidae)



Փղիկ Larinus latus (Curculionidae)

5.4. Օգտագործված գրականության ցանկ

1. Adamian, M.S. and Klem, D. Jr. 1999. Handbook of the Birds of Armenia. Oakland: American University of Armenia Corporation,1999.
2. Arakelyan M., Danielyan F., Corti C., Simbaco R., Leviton A. – Herpetofauna of Armenia and Nagorno-Karabakh.New York,USA, 2011, 1-154.
3. Aram Aghasyan, Levon Aghasyan, Eduard Yeghiasaryan, Silva Amiryan. “Amphibians and reptiles in the new edition of the Animals’ Red Data Book of Armenia” Agriculture, Forestry and Fisheries, 2013; 2(2): Pages 77-88, 10.11648/j.aff.20130202.14
4. Nabozhenko M.V., Kalashian M.Yu. A faunistic review of darkling beetles (Coleoptera: Tenebrionidae; excluding Alleculinae) of Armenia and partly the Nakhichevan Autonomous Republic of Azerbaijan with new records and taxonomic notes. Caucasian Entomological Bulletin, 17(2), 2021: 425–450
5. Tuzov V. K. (ed.). Guide to the Butterflies of Russia and Adjacent Territories (Lepidoptera, Rhopalocera). Vol 1, Pensoft publ., 1997, 480 p.
6. Tuzov V. K. (ed.). Guide to the Butterflies of Russia and Adjacent Territories (Lepidoptera, Rhopalocera), Vol. 2, Pensoft publ., 2000, 580 p.
7. Авагян А.В. “Фауна и экология насекомоядных Армении”. Дисс.канд.биол.наук.Ереван,2010.
8. Агасян А.Л. Змеи окрестностей Еревана и прилежащих территорий. В сб. Герпетологические исследования на Кавказе. Л.: Изд. ЗИН АН СССР, 1986в, 158, 26-33.
9. Агасян А.Л. К изучению гюрзы в Армянской ССР. Матер. Ш конф. молодых зоологов. Ереван: Изд. АН Арм.ССР, 1985в, 3-5
10. Агасян А.Л. Особенности распространения, хозяйственное значение и вопросы охраны пресмыкающихся Арм.ССР. Ж. Айастани бнутюн (Природа Армении), 1986г, 4 (на арм.яз.).

11. Агасян А.Л. Современное состояние редких видов рептилий Армении и пути их сохранения. Биолог. ж. Армении, 1985а, 38, 8, 661-665.
12. Агасян А.Л. Фауна змей Арменииии Нахичеванского региона. Автореферат диссер. на соиск. Уч степ. Канд.биол.наук. Ереван. Ин-тут зоологии НАН Армении.1996.
13. Акрамовский Н.Н. Моллюски. Фауна Армянской ССР. Ер., 1976, 272 с.
14. Даль С. ”Животный мир Армянской ССР.т.1.Позвоночные. Изд-во АН Арм ССР,1954.
15. Даревский И. С., 1957. Фауна пресмыкающихся Армении и ее зоогеографический анализ. Дисс. канд. биол. наук. Ереван.
16. Калашян М.Ю. Фауна жуков-златок (Coleoptera, Buprestidae) Армянской ССР. Канд. дисс., Ер., 1987
17. Калашян М.Ю., Фаградян С.Г. Заметки по фауне жуков-карапузиков (Coleoptera, Histeridae) Армении. Humanity space International almanac, 6(5), 2017: 862-877
18. Карапетян А. К. Зерновки (Bruchidae). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1985, 172 с.
19. Касабян М. “Хищные млекопитающие Армении”. Дисс.канд.биол.наук.Ереван, 2000.
20. Касабян М.,Г. Шакал. Ж. Природа Армении, N4, Ереван 1985
21. Ляйстер, Г. В. Соснин – Материалы по орнитофауне Арм. ССР. Ереван Изд. Арм. Фил. АН. СССР, 1942.
22. Марджанян М. А. Щелкуны (Elateridae) Армянской ССР. - Ер., 1986, 272 с.
23. Мартиросян Б.А.Папанян С.Б.Дикие млекопитающие Армении.Изд.АН АрмССР. 1983.
24. Плавильщиков Н. Н. Определитель жуков-дровосеков Армении. – Ер., 1949, 232 с.
25. Попов Г. Ю.” Эколого-фаунистическое исследование и высотное распространение некоторых мелких млекопитающих Армении”. Дисс.канд.биол.наук.Ереван,2003.
26. Тер-Минасян М. Е. Определитель жуков-долгоносиков (Coleoptera, Curuculionidae) Армении. – Зоол. сб. АН АрмССР, 4, 1947, 220 с.
27. Туниев Б. С., Орлов Н.Л., Ананьева Н.Б., Агасян А.Л. 2009. Змеи Кавказа (таксономическое разнообразие, распространение, охрана). СПб-М.: Зоологический институт РАН. 303 с.
28. Яблоков-Хнзорян С. М. Жужелицы (Carabidae), ч.1. Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1976, 292 с.
29. Яблоков-Хнзорян С. М. Майки (Meloidae) и Пыльцееды (Alleculidae). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1983, 156 с.
30. Яблоков-Хнзорян С. М. Пластинчатоусые (Scarabaeoidea). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1967, 225 с.
31. Աղասյան Ա.Լ., Քալաշյան Մ.Յու. (խմբ.) Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք. 2010. Երևան, ՀՀ Բնապահպանության նախարարություն, “Զանգակ” հրատ., 368 էջ
32. ՀՀ Կենդանիների Կարմիր Գիրք – Երևան 1987, 2010
33. Дадикян М.Г. Рыбы Армении //Изд-во АН Арм. ССР. - Ереван, 1986, - 245 с.
34. Gabrielyan B. K. An Annotated Checklist of Freshwater Fishes of Armenia. Naga, The ICLARM Quarterly, 24, 3 & 4, July-Desember, 2001, pp. 23-29.

35. Պիպոյան Ս.Խ. Հրազդան և Քասաղ գետերի ձկնաշխարհը և դրա կենսաբազմազանության վրա Եղվարդի ջրամբարի շահագործման հնարավոր ազդեցությունը // Հայաստանի կենսաբանական հանդես, 2018, 70 (2), էջ 72-77:

6. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ք.Երևանի Աջափնյակ համայնքի մետրոյի կայարանի կառուցման ծրագիր: Նախագծի իրականացման ընթացքում պատմա-մշակութային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության նախնական գնահատական-եզրակացություն

6.1. Ծրագրի իրականացման տակ ներառված տարածքի և շրջակայքի պատմա-մշակութային ռեսուրսները, պատմա-հնագիտական տեղեկանք

Հրազդան գետի միջին հոսանքը և հատկապես կիրճի՝ Երևան քաղաքի վարչական սահմաններով անցնող հատվածն իրենից ներկայացնում է մի ուրույն գեոմորֆոլոգիական-էկոլոգիաական խորշ, որտեղ մշակութային լանդշաֆտը սկսել է ձևավորվել դեռևս քարի դարում: Ասվածի վկայությունը Երևան-1 և Ծիծեռնակաբերդ-1 քարայր-կացարաններն են, որտեղ բացահայտվել են մեզանից 60-40 հազար տաի առաջ ապրող մարդու կայաններ, ընդ որում, Երևան-1 քարայրը Հայաստանի Հանրապետության և տարածաշրջանի միջին պալեոլիթյան կարևորագույն հուշարձաններից մեկն է (**Նկարներ 5-8**):

Հրազդան գետի կիրճում առկա են նաև Ք.ա. IV-III հազարամյակներով հասակագրվող էնեոլիթ-վաղբրոնզիդարյան հուշարձաններ, որոնց շարքում պետք է առանձնացնել Ծիծեռնակաբերդ-1 դամբարանադաշը (ԵրԳԷս), Արաբկիր-1 քարայրը (Այսումինի գործարան) և Շենգավթի բնակատեղին: Վերջինիս՝ տասնամյակներ տևող պեղումները բացահայտել են գետի ձախափնյա դարավանդներից մեկի վրա տարածվող վաղ երկարագործական բազմաշերտ մի բնակատեղի, որը վաղբրոնզիդարյան՝ կուր-արքսյան մշակույթի կարևորագույն հուշարձաններից մեկն է մեր տարածաշրջանում (**Նկարներ 9-11**):

Հրազդան գետի կիրճը բրոնզի դարի հետագա փուլերում և վաղ երկաթի դարում (Ք.ա. II – հազարմյակ – Ք.ա. I հազարմյակի առաջին քառորդ) ձեռք է բերում կարևորագույն հաղորդակցման ճանապարհի կարգավիճակ, ինչի մասին կարելի է դատել նրա ողջ երկայնքով՝ միմյանցից տեսանելի հեռավորության վրա գտնվող ամրոց-բնակատեղիների, ամրաշինական բնույթի այլ կառույցների (պահակակետեր, աշտարակ-դիտակետեր և այլն) առկայությունից, որոնցից մի քանիսը գտնվում են հենց Երևանի վարչական տարածքում: Դրանց շարքում են Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղին (ամենայն հավանականությամբ պաշտպանված է եղել), Ծիծեռնակաբերդը, Զորաբերդը, Կարմիր բերդը, Պտղնիի ամրոցները և այլն (**Նկարներ 12-17**):

Հրազդանի կիրճը և հարակից տարածքները առանձնակի կարևոր դեր են ձեռք բերում Վանի թագավորության շրջանում, երբ Ք.ա. 685 – 645 թթ. ընթացքում Ռուսա II արքան, գետի կիրճի Արարատյան սրահարթ դուրս եկող մասում, կառուցում է Թեյշեբաինի (Կարմիր բլուր) բերդաքաղաքը, որը գոյատևել է մինչև Ք.ա. 590 թ.: Վանի

թագավորության վերջին շրջանի այս կարևորագույն քաղաքական-տնտեսական միավորն իրականացրել է տարածքի արտադրական լանդշաֆտի ձևավորման հեղափոխիչ միջոցառումներ, հիմնելով մեծաքանակ խաղողի այգիներ և դրանք ոռոգելու համար հանել է ջրանցքներ, որոնցից երեքը՝ Դալմայինը, Աբուհայաթինն ու Մամռիին անցնում են հենց Հրազդան գետի կիրճով: Ընդ որում՝ Դալմայի ջրանցքը գործում է մինչև այժմ (**Նկարներ 18-30**):

Կարմիր բլուրի անկումից հետո վերը նշված պատմա-մշակութային միավորների մի մասում (Ծիծեռնակաբերդում, Զորաբերդում, հենց նույն Կարմիր բլուրում և այլն) կյանքը շարունակվել է դասական և միջնադարյան շրջաններում, ինչի մասին են խոսում դրանց պեղումների արդյունքում բացահայտված նյութական մշակույթի մնացորդները, դամբարանադաշտերը, ոռոգման համակարգերը և այլն:

Նշված տարածքների տնտեսական կյանքը՝ հատկապես խաղողագործությունն ու այգեգործությունը, նոր վերելք են ապրում խանական շրջանում, երբ Երևանն ու շրջակայքը դառնում են խաղողի և գինու արտադրության և առևտրի կարևորագույն կենտրոններ, վերանորոգվում և վերագործարկվում են ուրարտական ջրանցքները, վերականգնվում և ընդլայնվում է խաղողագործական լանդշաֆտը: Ներկայումս Հրազդան գետի կիրճում՝ հատկապես Երևանի վարչական սահմաններում, ակնհայտորեն կարելի է տեսել հնամենի այս խաղողագործական լանդշաֆտը՝ որը տարածվում է ջրանցքների երկայնքով և ունի դարավանդների տեսք (**Նկարներ 31-33**):

6.2. Ծրագրի իրականացման ընթացքում պատմա-մշակութային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության ռիսկերի նկարագրությունը

Մետրոյի Աջափնյակ կայարանի շինարարության նախագծի՝ պատվիրատուի կողմից տրամադրված տարբերակի համաձայն՝ այն սկիզբ է առնելու Հրազդան գետի ձախափնյա հատվածից՝ Արաբկիր համայնքի վարչական տարածքում, որտեղ առկա են դեռևս խարհրդային շրջանում կառուցված թունելների ելքերը (**Քարտեզներ 2-2ա**): Ապա անցնելով Հրազդան գետը նորակառույց կամրջով՝ Աջափյակ համայնքի վարչական տարածք, գետի աջափնյա կողմում՝ միանալու է նորակառույց ժայռափոր թունելներին, որոնցով հասնելու է Աջափնյակ կայարան: Հրազդան գետի կիրճով անցնող հատվածը մոտ 210 մ է (**Քարտեզներ 2ա, Նկարներ 34-36**):

Նախագծի իրականացման համար ընտրված տարածքում առկա պատմա-մշակութային միավորները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ ձախափնյա խումբ և աջափնյա խումբ:

Ձախափնյա խմբի մեջ են մտնում Զորաբերդ ամրոցը, Զորաբերդ-1 քարայրը (Նոր Արաբկիր-1), Աբուհայաթի ջրանցքը և հարակից հին այգեգործական գոտին (**Քարտեզ 2ա**, **Նկարներ 14-17, 37-38**): Նշված միավորները ներառված են Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցուցակում (տե՛ս Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, ՀՀ կառավարության 7 հոկտեմբերի 2004 թ. որոշում N1616-Ն): Դրանք ներառված են հետևյալ դասիչների տակ՝ 1.3.1., 1.3.1.1.1.,

1.5.18. և պահպանվում են պտության կողմից: Դատելով նախագծի և բերված միավորների փոխհարաբերությունից (**Քարտեզ 2ա**), դրանք գտնվում են նախագծի իրականացման համար ընտրված տարածքի ուղղակի հարևանությամբ, սակայն չեն ենթարկվում անմիջական ազդեցության: Այսուհանդերձ, սույն միավորները կարիք են ունենալու որոշակի պահպանական միջոցառումների կիրառության (տե՛ս ստորև):

Թունելների ելքից հետո նախագծային տարաքծը Հրազդան գետի ձախ ափով անցնում է լիովին ավերման ենթարկված տարածքով, որտեղ պատմա-մշակութային միավորներ լինել չեն կարող, և անցնում աջակողմյան հատված (**Քարտեզ 1ա, Նկարներ 39-40**):

Աջափնյա գոտում ժամանակին փաստագրված միավերների շարքում են Դալմայի ջրանցքի մի հատված, որտեղով անցնում է ջրանցքի փոքր թունելը, ինչպես նաև Աջափնյակի՝ թվով 4 քարայրներից բաղկացած քարանձավային համալիրը (**Քարտեզ 2ա**, **Նկարներ 29-30, 41-43**): Այս միավորները ևս ներառված են Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցուցակում՝ 1.1.13., 1.1.14., 1.1.15., 1.1.16., 1.3.19. դասիչների տակ և պետական պահպանության տակ են: Դատելով նախագծի և բերված միավորների փոխհարաբերությունից, դրանց հիմնական մասը ենթարկվելու է ուղղակի ազդեցության մետրոյի կայարանի շինարարության համար՝ Աջափնյակ համայնքի տարածքով նախատեսվող թունելների փորման դեպքում: Մասնավորապես, ուղղակի ազդեցության կարող են ենթարկվել Աջափնյակի քարանձավային համալիրը և Դալմայի ջրանցքի մի հատվածը (**Քարտեզ 2**, **Նկարներ 44-46**), ինչը կախված է ժայռափոր թունելային հատվածի հիփսոմետրիկ դիրքից: Ի հավելումն, վտանգավոր գոտում է հայտնվում նաև Դալմայի ջրանցքի փոքր թունելը, որը շինարարության ընթացքում առաջացող ցնցումներից կարող է լուրջ վնասներ կրել: Գործնականում՝ Աջափնյակի մետրոյի շինարարության համար, պատմա-մշակութային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության ամենամեծ ռիսկեր պարունակող տարածքը Հրազդանի կիրճի աջափնյա վերին հատվածն է, որտեղ գտնվում են վերը նշված միավորները (**Քարտեզ 3**):

6.3. Ծրագրի իրականացման ընթացքում պատմա-մշակութային ռեսուրսների վրա բացասական ազդեցության ռիսկերը մեղմելու միջոցառումները (նախնական եզրակացություն)

Ամփոփելով վերևում բերված՝ շինարարական ծրագծի հետ փոխհարաբերվող պատմա-մշակութային լանդշաֆտի նկարագրությունը, կարող են հանգել հետևյալ եզրակացությունների.

- ✓ Աջափնյակի մետրոյի կայարանի շինարարական նախագիծն անցնում է Հրազդանի կիրճի՝ հնագիտական մեծարժեք սկզբնաղբյուրներով հագեցած տիրույթով, որոնց մեջ առանձնակի նշանակություն ունեն Ձորաբերդ ամրոցը, Աբուհայաթի և Դալմայի ջրանցքները և հատկապես՝ վերջինիս փոքր թունելը:

- ✓ Բերված պատմա-մշակութային միավորներն ազդեցության տեսանկյունից կարելի է բաժանել երկու խմբի՝ ոչ անմիջական ազդեցություն կրող միավորներ և անմիջական ազդեցություն կրելու վտանգի տակ հայտնվող միավորներ:

- ✓ ոչ անմիջական ազդեցության ենթարկվող միավորները գտնվում են գետի կիրճի ձախակողմյան մասում, որոնք են Ձորաբերդի ամրոցը, Ձորաբերդ-1 քարայրը, Աբուհայաթի ջրանցքի որոշակի հատվածներ և դարավանդաձև կառուցվածք ունեցող հին այգոգործական գոտին: Այս միավորների համար անհրաժեշտ է սահմանել մեղմացնող միջոցառումների հատուկ ռեժիմ, այսինքն շինարարական կազմակերպությանը տրամադրել դրանց տարածման սահմանները, տեղադրել հատուկ ցուցանակներ, որպեսզի այդ տարածքներում չիրականացվեն հողային աշխատանքներ, չկուտակվի շինարարական աղբ, շինանյութեր, չկայանվեն տեխնիկա, ծանր մեխանիզմներ, մեքենաներ և այլն:

- ✓ անմիջական ազդեցության ենթարկվող երեք միավորները՝ Դալմայի ջրանցքը, Դալմայի փոքր թունելը և Աջափնյակի քարանձավային համալիրը բաժին են ընկնում գետի կիրճի աջակողմյան ժայռային տեղամասին: Դրանց շարքում մեծագույն պատմա-մշակութային արժեք է Դալմայի ջրանցքն իր թունելով, որը Ք.ա. VII դ. կառուցված լինելով, և մի քանի վերանորոգում անցնելուց հետո, գործում է առ այսօր: Թունելի և ջրանցքի պահպանության համար համար կարիք կլինի մշակել պահպանական հատուկ միջոցառումներ, ինչպես օրիանակ թրթռումների ազդեցության մեղմում թե՛ շինարարության և թե՛ մետրոյի շահագործման ժամանակ, պաշտպանիչ պատերի կառուցում և այլն, որի նախագիծն անհրաշեշտ կլինի համաձայնեցնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ:

- ✓ գիտական կարոր արժեք ունեն նաև Աջափնյակի քարաձավային համալիրը կազմող միավորները: Դրանցից մեկում՝ 2000-ական թվականների սկզբներին իրականացված ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է վանակատե կուռք:

- ✓ այսուհանդերձ, եթե համեմատենք նշված միավորները, ապա ուղղակի ազդեցության վատագույն սցենարի դեպքում Դալմայի ջրանցքը պետք է անպայմանորեն պահպանել, իսկ քարայրների պատմա-մշակութային արժեքը կարելի է փրկել դրանց անբողջական պեղումների իրականացմամբ և հետո միայն՝ վերջիններիս տարածքը կարելի է տրամադրել շինարարության նախագծի իրականացման համար:

Այսպիսով, ք. Երևանի Աջափնյակ մետրոյի կայարանի շինարարության նախագիծը պատմա-մշակութային ռեսուրսների վրա անհաղթահարելի խոչնդոտներ չունի, չնայած որ հնագիտական որոշ միավորների վրա կարող է ունենալ խիստ բացասական ազդեցություն: Այդ ազդեցությունը մեղմացնելու համար կպահանջվեն որոշակի միջոցառումներ՝ շինարարական մակերեսի սահմանափակումներ, պահպանական հատուկ ռեժիմներ, պեղման աշխատանքներ և այլն:

Ապագայում՝ նախագծի մշակման եզրափակիչ փուլում անհրաժեշտ կլինի նախագծող կազմակերպության հետ դաշտային պայմաններում ուսումնասիրել ծրագիծը, հասկանալ հուշարձանների վրա շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող ազդեցության մակարդակը և գտնել այնպիսի լուծումներ, որոնք կարող են լիարժեքորեն բացառել վերև նշված ռիսկերը:

6.4. Օգտագործված գրականության ցանկ

Նախնական գնահատական-եզրակացությունը կազմելու համար օգտագործվել է հետևյալ գրականությունը.

1. Շիրմազան Գր., 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Խմբագիր՝ Դ. Գազազյան, «Հայպետհրատ» հրատարակչություն, Երևան, 219 էջ:
2. Խանզադյան Է.Վ., 1967, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Պատասխանատու խմբագիր՝ Հ.Ա. Մարտիրոսյան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 146 էջ:
3. Սարդարյան Ս.Հ., 1967, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Խմբագիր՝ Մ.Ա. Իսրաելյան, «Միտք» հրատարակչություն, Երևան, 460 էջ:
4. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, ՀՀ կառավարության որոշում, 7 հոկտեմբերի 2004 թ., որոշում N1616-Ն
5. Հովհաննիսյան Ն.Ա., Եսայան Ա.Հ., Բոբոխյան Ա.Ա., Դալլաքյան Մ.Վ., Հոբոսյան Ս.Գ., Գասպարյան Բ., 2017, Հայկական խաղող և գինի, խմբագիրներ՝ Գասպարյան Բ., Դանիելյան Ա., Հոբոսյան Ս., Հովհաննիսյան Ն., «Անտարես» հրատարակչություն, Երևան, 432 էջ;
6. Հոբոսյան Ս., Գասպարյան Բ., Հարությունյան Հ., Սարատիկյան Ա., Ամիրխանյան Ա., 2021, Խաղողի և գինու հայոց մշակույթը, Խմբագիրներ՝ Բոբոխյան Ա., Պետրոսյան Ա., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 437 էջ:
7. Мартиросян А.А., 1961, Город Тейшебаини, по раскопкам 1947-1958 гг., Ответственный редактор Б.Б. Пиотровский, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 185 стр.;
8. Арутюнян Н.В., 1964, Земледелие и скотоводство Урарту, Ответственный редактор А.А. Мартиросян, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 231 стр.;
9. Есаян С.А., 1969, Ереван, Археологический очерк, К 2750-летию Еревана, Ответственный редактор Б.Б. Пиотровский, Издательство «Айастан», Ереван, 161 стр.;

10. Ерицян Б.Г., 1970, Ереванская пещерная стоянка и ее место среди древнвйших памятников Кавказа, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 32 стр.;
11. Gasparyan B., Egeland Ch.P., Adler D.S., Pinhasi R., Glauberman P., Haydosyan H., 2014, The Middle Paleolithic Occupation of Armenia: Summarizing Old and New Data, in: B. Gasparyan and M. Arimura (Eds.), Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Monograph of the JSPS-Bilateral Joint Research Project, Kanazawa University Press, Printed in Japan, 2014, ISBN 978-4-9908070-0-9, pp. 65-105;

15.06.2023 թ.

Բորիս Գասպարյան
Ազգային հնագիտական խորհրդատու



Արտուր Պետրոսյան
Ազգային հնագիտական խորհրդատու



Դմիտրի Առաքելյան
Ազգային քաղեզագրական խորհրդատու




Քարտեզ 1




Աջափնյակ մետրոյի կայարանի շինարարության նախագծային սխեման՝ Հրազդանի կիրճով անցնող հատվածում ըստ վարչական բաժանման (տարմադրվել է պատվիրատուի կողմից)

Քարտեզ 1ա



Աջափնյակ մետրոյի կայարանի շինարարության նախագծային սխեման՝ Հրազդանի կիրճով անցնող հատվածում (տարմադրվել է պատվիրատուի կողմից), որի վրա տեղադրված են տարածքում առկա պատմա-մշակութային միվորները

Քարտեզ 2



Աջափնյակ մետրոյի կայարանի շինարարության նախագծային սխեման՝ Հրազդանի կիրճով անցնող աջափնյա հատվածում, որտեղ առկա են պատմա-մշակութային լանդշաֆտի վրա բացասական ազդեցության ամենամեծ ռիսկերը

6.5. Նկարներ




Նկար 5. Երևան-1 քարայրի ընդհանուր տեսքը (Հրազդան գետի կիրճ)



Նկար 6. Երևան-1 քարայրի կամարաձև մուտքը



Նկար 7. Երևան-1 քարայրի պեղումներից հայտնաբերված վանակատե սրածայրեր (ուշ միջին վերին պալեոլիթ)



Նկար 8. Երևան-1 քարայրի պեղումներից հայտնաբերված վանակատե սրածայրեր (ուշ միջին վերին պալեոլիթ)



Նկար 9. Շենգավթի բնակատեղին Հրազդան գետի ձախափնյա դարավանդին՝ Երևանյան լճի ափին (օդային լուսանկար)



Նկար 10. Շենգավթի բնակատեղիի պեղումներով բացված տեղամասերը (օդային լուսանկար)



Նկար 11. Շենգավթի բնակատեղիի պեղումներից հայտնաբերված կարասներ
(Ք.ա. XXVI – XXIV դդ.)



Նկար 12. Կարմիր բերդը Հրազդան գետի կիրճում՝ Ջովունի գյուղի մոտ (օդային լուսանկար)



Նկար 13. Կարմիր բերդի պարսպապատերի դասավորությունը գետի դարավանդի և նրա վտակներից մեկի երկայնքով (օդային լուսանկար)



Նկար 14. Ձորաբերդ ամրոցի ընդհանուր տեսքը հարավից՝ Հրազդանի աջափնյա դարավանդին (օդային լուսանկար)



Նկար 15. Ձորաբերդի հարավային պարսպապատը (օդային լուսանկար)



Նկար 16. Ձորաբերդի պարսպապատերի դասավորությունը գետի դարավանդի և նրա վտակներից մեկի երկայնքով (օդային լուսանկար)



Նկար 17. Ձորաբերդի արևելյան պարսպապատը (օդային լուսանկար)



Նկար 18. Թեյշեբաինի բերդաքաղաքի (Կարմիր բլուր) միջնաբերդը հյուսիսից (օդային լուսանկար)



Նկար 19. Կարմիր բլուրի թիվ 28 գինու մառանը (Ք.ա. VII դ.)






Նկար 20. Խաղողի ածխացած կորիզներ Կարմիր բլուրից (Ք.ա. VII դ.)



Նկար 21. Դալմայի այգիների համայնապատկերը հյուսիսից (օդային լուսանկար)



Նկար 22. Ումեշինի կամ Էջմիածնի ջրանցքի կառուցման մասին Վանի թագավոր Ռուսա II-ի սեպագիր արձանագրությունը (Ք.ա. VII դ.), Ջվարթնոց, Արմավիր



Նկար 23. Աբուհայաթի ջրանցքի սկիզբը (մուտքի թունելը) Արզնի ՀԷԿ-ի մոտ



Նկար 24. Աբուհայաթի ջրանցքի սկիզբը (ելքի թունելը) Արզնի ՀԷԿ-ի մոտ



Նկար 25. Աբուհայաթի ջրանցքի տեսանելի հետքերը Դավթաշենի կամրջի հարևանությամբ (օդային լուսանկար)



Նկար 26. Դալմայի և Աբուհայաթի ջրանցքները Հրազդան գետի կիրճի միջին հոսանքում՝ Արաբկիր և Աջափնյակ թաղամասեր (օդային լուսանկար)



Նկար 27. Աբուհայաթի ջրանցքի լավ պահպանված՝ քարաշար հատված Կիևյան կամրջի մոտ, Արաբկիր համայնք (օդային լուսանկար)



Նկար 28. Աբուհայաթի ջրանցքի լավ պահպանված՝ քարաշար հատված Զորաբերից հարավ, Արաբկիր համայնք (օդային լուսանկար)



Նկար 29. Դալմայի ջրանցքի փոքր թունելի մուտքը, Հրազդանի կիրճ, Աջափնյակ համայնք (օդային լուսանկար)



Նկար 30, Դալմայի ջրանցքի փոքր թունելի ելքը, Հրազդանի կիրճ, Աջափնյակ համայնք



Նկար 31. Աբուհայաթի ջրանցքի մի հատվածը և հարակից այգեգործական գոտին Արաբկիր թաղամասի տակ՝ Դավթաշենի կամրջի հարևանությամբ (օդային լուսանկար)



Նկար 32. Այգեգործական լանդշաֆտի հետքեր Հրազդանի կիրճում՝ Արաբկիր թաղամասի տակ, Աբուհայաթի ջրանցքի ստորին մասում (օդային լուսանկար)



Նկար 33. Այգեգործական լանդշաֆտի հետքեր Հրազդանի կիրճում՝ Արաբկիր թաղամասի տակ (օդային լուսանկար)



Նկար 34. Հրազդան գետի այն հատվածը, որտեղ նախատեսվում է իրականացնել մետրոյի շինարարության ծրագիրը (օդային լուսանկար)




Նկար 35. Նախագծի իրականացման ծրագիծը Հրազդան գետի կիրճում (օդային լուսանկար)



Նկար 36. Նախագծի իրականացման ծրագիծը Հրազդան գետի կիրճում (օդային լուսանկար)



Նկար 37. Նախագծի իրականացման Հրազդանի կիրճի ձախակողմյան հատվածը, որտեղից դուրս են գալիս խորհրդային շրջանի թունելները (օդային լուսանկար)



Նկար 38. Թունելների անմիջական հարևանությամբ գտնվող պատմա-մշակութային միավորները (օդային լուսանկար)



Նկար 39. Թունելներից դեպի Հրազդան գետ տանող նախագծային հատվածը (օդային լուսանկար)



Նկար 40. Հրազդան գետով անցնող նախագծային հատվածը (օդային լուսանկար)



Նկար 41. Նախագծի իրականացման Հրազդանի կիրճի աջակողմյան հատվածը, որտեղից դուրս են գալու նորակառույց թունելները (օդային լուսանկար)



Նկար 42. Նորակառույց թունելների անմիջական հարևանությամբ գտնվող պատմա-մշակութային միավորները (օդային լուսանկար)



Նկար 43. Աջափնյակի քարանձավային համալիրի ընդհանուր տեսքը Հրազդան գետի աջ ափին (օդային լուսանկար)



Նկար 44. Նախագծի իրականացման հատվածը Աջափնյակի քարանձավային համալիրի վերին մասում (օդային լուսանկար)

7. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

7.1. Երկրաբանական հուշարձաններ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր: Համաձային Հայաստանի Հանրապետության կառավարություն 14 օգոստոսի 2008 թվականի N967-ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ ցանկում ներառված են Երևանի Հրազդանի կիրճում գտնվող երկու բնության հուշարձաններ՝

- ✓ «Անանուն» սյունաձև բազալտներ՝ Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ.Սարգիս եկեղեցու մոտ,
- ✓ «Անանուն» սյունաձև բազալտներ՝ Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ:

Երևան քաղաքում ներկայումս գործում են նաև Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը, որոնք ծրագրի իրականացման տրածքից գտնվում են մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

8. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

8.1. Ընդհանուր տեղեկատվություն

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն Հայաստանի Հանրապետության ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում Ազգային ժողովն ու կառավարությունը, Հայաստանի Հանրապետության բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն: Մայրաքաղաքում գործում են Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:
2021թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- ✓ արդյունաբերություն՝ 34.0 %,
- ✓ շինարարություն՝ 42.9 %,
- ✓ մանրածախ առևտուր՝ 69.7 %,
- ✓ ծառայություններ՝ 86.8 %:

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Աղյուսակ 10. Երևան քաղաքի բնութագրերը

Տարածքը	223 քառ. կմ
ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
Վարչական շրջաններ	12
Բնակչության թվաքանակը 2022թ. տարեսկզբի դրությամբ	1 092.8 հազար մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2021թ., %	36.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 323.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	910.6 հա

8.2. Աջափնյակ Վարչական շրջան

Աջափնյակ վարչական շրջանն ունի 2 582 հա տարածք, բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում է 110.4 հազ մարդ: Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Դավթաշեն, Արաբկիր, Կենտրոն, ՄալաթիաՍեբաստիա վարչական շրջանների հետ և ընդգրկում է Վահագնի, Սիլիկյան, Անաստասավան, Նորաշեն թաղամասերը:
Աջափնյակի ընդհանուր տարածքը 25կմ^2 է (Երևան քաղաքի ընդհանուր մակերեսի 11.21%-ը): Տարածքով Աջափնյակը Երևանի 4-րդ ամենամեծ վարչական շրջանն է: Աջափնյակ բառը միանգամից խոսում է վարչական շրջանի նկարագրության մասին, որ այն գտնվում է աջ ափին: Հրազդան գետը Երևանը բաժանում է երկու մասի՝ ձախ ափ և աջ ափ, այդ պատճառով էլ, աջ ափը անվանվել է Աջափնյակ: Աջափնյակն էլ իր հերթին բաժանվում փոքր թաղամասերի Աջափնյակ թաղամաս, Նորաշեն, Նազարբեկյան, Սիլիկյան, Լուկաշին, Վահագնի, Անաստասավան, և Չերեմուշկի: Գևորգ Չաուշի հրապարակը և Հալաբյան փողոցը կազմում են թաղամասի հիմնական մասը: Աջափնյակի նշանակալի փողոցներից է Գևորգ Չաուշի փողոցը, Մովսես Սիլիկյան փողոցը, Շիրազի փողոցը, Բաշինջաղյան փողոցը, Աշտարակի խճուղին: Աջափնյակի

համար նշանակալի փողոցներից է նաև Լենինգրադյան փողոցը, որով Աջափնյակի հետ է կապվում Կենտրոն վարչական շրջանը և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը:

Աջափնյակը բազմաթիվ զբոսայգիներով է համալրվել 21-րդ դարի 2 տասնամյակի ընթացքում: Մեծ ու նշանակալի այգիներից է Թումանյանի այգին, Բունեոս Այրեսի այգին և Ազատամարտիկների այգին:

Աջափնյակում հիմնականում զբաղվում են մանրածախ առևտրով, այն գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սահմանի արևելյան մասում:

1885 թվականից կոնյակի գործարանը գործարկվել է Պռոշյան գյուղում: Ներկայիս արտադրամասերը բացվել են 1980-ական թվականներին: Ներկայումս թաղամասում գործում են բազմաթիվ խոշոր արդյունաբերական ընկերություններ, ինչպիսիք են 1987 թ. հիմնադրված Thermomex էլեկտրոնային սարքերի գործարանը: 1997 թ. հիմնադրված հրուշակեղենի արտադրության գործարանը: «Ապարան» հանքային ջրերի գործարանը: 2003 թ. հիմնադրված «Բիոկաթ» կաթնամթերքի գործարանը: 2004 թ. հիմնադրված «Պրոֆմետ» մետաղական խողովակաշինական գործարանը: 2007 թ. հիմնադրված «Էլիտ Շանթ» պաղպաղակի գործարանը: 2007 թվականին հիմնադրված «Մարտին Սթար» սննդի արտադրության ձեռնարկությունը: 2008 թ.-ին հիմնադրված «Amelia» հանքարդյունաբերական ընկերությունը, և «Երկրաջերմ» գործարանը՝ 2016 թվականին հիմնադրված մետաղական կտրող մեքենաների համար:

Աջափնյակում է գտնվում Երևանի Հանրապետական հիվանդանոցը, որը Երևանի ամենամեծ հիվանդանոցն է:

Աջափնյակը լինելով Հրազդան գետի աջ ափին, իր կապը կենտրոնի հետ պահում է Կիևյան կամրջով: Աջափնյակի հիմնական տրանսպորը տրոլեյբուսներն են և ավտոբուսները, ապագայում նաև ծրագրվում է բացել մետրոյի Աջափնյակ կայարանը և Նազարբեկյան կայարանը:

2016-2017 թվականների դրությամբ Աջափնյակում գործում է 20 հանրակրթական և 4 մասնավոր դպրոցներ, որոնց թվում է նաև Քանաքեռ-Զեյթունի միջազգային դպրոցը (բացվել է 1995թ.-ին): Թաղամասում գործում են նաև մասնագիտական դպրոցներ:

Աջափնյակում գործում են նաև բազմաթիվ համալսարաններ, որոնցից է Երևանի Հայբուսակ համալսարանը (բացվել է 1990թ.) և Երևանի Ագրարային համալսարանը (բացվել է 1992թ.):

1943թ.-ին բացվել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնը:

1993թ.-ին բացվեվ Պաշտպանության նախարարության Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական ակադեմիան, որը այժմ այնտեղ չէ:

2011թ.-ին Աջափնյակում է բացվել Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը:

8.3. Արաբկիր Վարչական շրջան

Արաբկիր վարչական շրջանն ունի 1 325 հա տարածք, բնակչության ընդհանուր թվաքանկը կազմում է 115.0 հազ. Մարդ: Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ:

Արաբկիր, Երևանի վարչական շրջաններից մեկը, որը քաղաքի հյուսիսային մասում գտնվող խոշոր ու բարգավաճող թաղամասերից մեկն է: Այն հիմնադրվել է 1925 թվականի նոյեմբերի 29-ին ու սկիզբ է դրել Երևանի մոտակայքում նոր ավանների կառուցմանը:

Արաբկիրը Երևանի ամենախիտ բնակեցված վարչական շրջաններից է: 2011 թվականի մարդահամարի տվյալներով, շրջանում բնակվում է 117 704 մարդ (Երևանի բնակչության 11.1%-ը): Ըստ 2017 թվականի պաշտոնական հաշվարկների՝ թաղամասի բնակչությունը կազմում է 117.704 մարդ (Երևանի վարչական շրջաններում 6-րդ տեղը): 2018 թվականին Արաբկիրում բացվեց Արաբկիրի Սբ. Խաչ եկեղեցին:

Արաբկիրն ունի մոլոկանների փոքր համայնք: Մոլոկան ընտանիքներից շատերը Հայաստանի հյուսիսային շրջաններից տեղափոխվոցին Երևան՝ հիմնականում Արաբկիր, որտեղ նրանց ջանքերով կառուցվեց Մոլոկանների այգի անվանումը ստացած այգին՝ Փափազյան փողոցի վերջնամասում:

Արաբկիրում գործում են բազմաթիվ հանրային գրադարաններ, այդ թվում 1943 թվականին բացված ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, №5 գրադարանը (բացված 1950թվականին), Նորարության և ձեռներեցության ազգային կենտրոնը (բացված 1963թ.), №6 գրադարանը (բացված 1976 թվականին)[3], Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադրանի մասնաճյուղը №29 (բացված 1951 թվականին), երեխաների №33 (բացված 1947թ.)+ և №36 (1958թ.) գրադրանները:

Կոնստանտին Սարաջյանի անվան երաժշտական դպրոցը և Ալեքսեյ Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցը գործում են 1952թ. և 1982թ.-ից:

Արաբկիրը մնացած թաղամասերի հետ հիմնականում կապված է Կոմիտասի պողոտայով, Կիևյան փողոցով, Բարեկամության մետրոյով և այլն: Արաբկիր թաղամասի հիմնական տրանսպորտային միջոցներն են տրոլոյբուսները, ավտոբուսները և մետրոն: Արաբկիրում է գտնվում «Բարեկամություն» մետրոյի կայարանը:

Ներկայումս Արաբկիրը Երևանում առևտրային կենտրոն է: Այնուամենայնիվ խորհրդային ժամանակաշրջանում թաղամասի հյուսիսում բացվեցին բազմաթիվ խոշոր արդյունաբերական գործարաններ՝ ստեղծելով բավականին մեծ արդյունաբերական տարածք: 1936 թ. տարածքում բացվեց Սևան Հրազդան Կասկադի Քանաքեռի ՀԷԿ-ը[4]: Այսումինե մածուցիկ նյութի գործարանը (որը հայտնի է որպես Ռուսալ Արմենալ 2000 թվականից), բացվել է 1950 թվականին: Հետագայում 1964 թ. բացվել է «Էրեբազ» ավտոմոբիլային գործարանը, որին հաջորդում է 1966թ.-ին Երևանի

էլեկտրական լամպերի գործարանը (հայտնի է որպես «Մեծ օր» 2000 թվականից): 1967 թ-ին բացվեց Ուրարտուի հաց և հացամթերք արտադրող գործարան:

Անկախությունից հետո Արաբկիրում բացվել են բազմաթիվ նոր ձեռնարկություններ, ինչպիսիք են 2000 թ. «Էլնոր» կարագի գործարանը, 2002 թ. «ՌԱՍՍԻ» կոշիկի գործարանը, 2008 թ. «ՍԱՓԻՐՈՆԻ» լիմոնադի գործարանը, 2009 թ. «Գոլդշին» տանիքի արտադրության գործարանը:

Արաբկիրում գործում են խոշոր առևտրային կենտրոններ և մանրածախ առևտրի կենտրոններ: Կոմիտաս պողոտան և նրա խաչմերուկները մեծ քանակությամբ մանրածախ խանութներ ունեն: «Երևան Սիթի» հիպերմարկետը շրջանի խոշորագույն առևտրի կենտրոնն է: Արաբկիրում գտնվում է «Ռիո մոլ» առևտրի և ժամանցի կենտրոնը, «Երևան Էքսպո» ցուցահանդեսի կենտրոնը գտնվում է Արաբկիրի Մերգելյան կենտրոնում:

Թաղամասում գտնվում է նաև բազմաթիվ բժշկական կենտրոններ, ինչպիսիք են՝ Արաբկիրի մանկական բժշկական կենտրոնը, Սերգեյ Միքայելյանի ինստիտուտը, Արաբկիրի համատեղ բժշկական կենտրոնը, Սլավմեդ բժշկական կենտրոնը, Ռուսաստանի ռազմական հիվանդանոցը և այլն:

թաղամասը ունի 21 հանրակրթական դպրոց, ինչպես նաև 6 մասնավոր դպրոց, որոնց թվում են «Այբ» ավագ դպրոցը: Թաղամասում գործում են 2 մասնագիտական դպրոցներ:

Թաղամասում գործում են բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, այդ թվում՝

- ✓ Հայաստանի Ամերիկյան Համալսարան,
- ✓ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան,
- ✓ Երևանի կառավարման համալսարան,
- ✓ Երևանի համակարգչային գիտահետազոտական ինստիտուտ,
- ✓ Երևանի պետական հումանիտար քոլեջ՝ 1881 թվականին հիմնադրված կառույցի իրավահաջորդը

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճարտարագիտաբնապահպանական հետազոտության հաշվետվության այս բաժինը անդրադառնում է «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցում» ծրագրի աշխատանքներով պայմանավորված կարևորագույն հնարավոր բնապահպանական ազդեցություններին:

Ընդհանուր առմամբ հնարավոր բացասական բնապահպանական ազդեցությունները, որոնք պայմանավորված են շինարարական աշխատանքներով՝ ակնկալվում է, որ

կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված: Հնարավոր անբարենպաստ ազդեցությունների զգալի մասը կդիտարկվի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Շինարարության փուլում հավանական բացասական բնապահապանական ազդեցությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալ ազդեցություններով՝ հողերի դեգրադացիա, քանդված նյութերի և շինարարական աղբի ոչ ճիշտ տեղադրման արդյունքում լանդշաֆտի և հողի էրոզիա, շինարարության ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսք, ջրային ռեսուրսների աղտոտում, շինարարական հրապարակների ժամանակավոր օգտագործում (շինարարական ճամբարներ, մեքենաների և շինարարական տեխնիկայի կայանման հրապարակներ, պահեստարաններ և այլն), հողային գրունտների ձեռքբերման տարածքի օգտագործում, շինարարության ընթացքում բեռնատարների երթևեկության ավելացմամբ օդի ժամանակավոր աղտոտում, անհարմարություններ կապված աղմուկի և թրթռումների հետ:

Մյուս կողմից մետրոյի կայարանի կառուցման շինարարական աշխատանքներով պայմանավորված դրական սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունները ակնկալվում են, որ կլինեն նշանակալի, քանի որ ծրագրի իրականացումը կապահովի հուսալի կապ, հնարավորություն կստեղծի ուղևորների արագ և անվտանգ տեղաշարժի համար, կնվազեցնի ճանապարհների խցանումները ենթակառուցվածքների շահագործման ու պահպանման ծախսերը, ինչպես նաև բնակչության և բիզնեսների համար մեքենաների տեխնիկական սպասարկման ծախսերը, կնպաստի նաև ճանապարհային երթևեկության բարելավման և մեքենաներից արտանետումների նվազմանը, նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն (ներառյալ շինարարության փուլում ժամանակավոր աշխատատեղերի հնարավորությունը), կբարելավվի հասանելիությունը դեպի առողջապահական, կրթական կամ սոցիալական հաստատություններ, լավ հնարավորություններ կստեղծվի բնակչության ազատ տեղաշարժի համար: Առաջարկվող ծրագրից ակնկալվող ընդհանուր դրական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կլինեն երկարաժամկետ և կնպաստեն քաղաքի սոցիալական և տնտեսական աճին:

«Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի կայարանի կառուցում» ծրագրի աշխատանքներով պայմանավորված շինարարության և շահագործման փուլերում հնարավոր անբարենպաստ բնապահպանական և սոցիալական ազդեցությունները նկարագրված են ստորև:

9.1. Շինարարության փուլ

Ազդեցություններ ժամանակավոր մոտեցնող ճանապարհներից և աշխատանքային տեղամասերից: Ժամանակավոր ճանապարհների ստեղծումը շրջանցելու համար, այն հատվածները, որտեղ իրականացվում են շինարարական աշխատանքները, ինչպես նաև շինարարական նյութերի պահեստների մուտքերն ու աղբի ժամանակավոր կուտակման վայրերը, շինարարական ճամբարները,

շինարարական մեքենաների և տեխնիկայի կայանման վայրերը կարող են բարձրացնել հողի էրոզիան և բերել լանդշաֆտի դեգրադացիայի:

Աղտոտում շինարարական հրապարակներից եկող հոսքերով: Սարքավորումներից և պահեստավորված շինարարական նյութերից արտահոսքի արդյունքում նավթը, նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են ներթափանցել ստորգետնյա ջրերի մեջ կամ արտահոսել դեպի մակերևութային ջրհոսքեր:

Քանդված նյութերի և շինարարական աղբի առաջացում: Քանդված աղբը կարող է առաջանալ ենթակառուցվածքների շինարարական աշխատանքների ընթացքում: Այս ազդեցությունները կլինեն տեղայնացված և կնվազեցվեն համապատասխան հեռացման և տեղադրման միջոցառումների կիրառմամբ:

Փորված նյութերի և շինաղբի հեռացում: Շինարարական և վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ հնարավոր է շինարարական աղբի առաջացում: Այս ազդեցությունները լինելու են տեղայնացված և կմեղմացվեն աղբի հեռացման և թափման համապատասխան գործողությունների արդյունքում, որոնք կարող են ներառել, սակայն չսահմանափակվել թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի պատշաճ ընտրությամբ, այս վայրերի սահմանների հստակ ուրվագծմամբ՝ դրանց ընդարձակումից խուսափելու նպատակով, նման վայրերից արտահոսքի կանխարգելմամբ, աղբաթափման վայրի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր համաձայնության ձեռքբերմամբ, թափոնները աղբաթափման վայր պատշաճ ժամանակին տեղափոխմամբ:

Լանդշաֆտի դեգրադացիա և հողի էրոզիա: Որոշ տարածքներ զգայուն են հողերի էրոզիայի նկատմամբ: Հետևաբար, հողային և բարեկարգման աշխատանքների ժամանակ պետք է իրականացվեն հակա-էրոզիոն միջոցառումներ:

Աղմուկ, ցնցումներ և արտանետումներ. աղմուկի, ցնցումների և արտանետումների առաջացումը կապված է շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում, ինչպես նաև շինարարական աշխատանքների արդյունում առաջացող ծուխը: Եռակցման աշխատանքները բերում են եռակցման աերոզոլի և մանգանի մոնօքսիդի արտանետումներին: Բետոնախառնիչների աշխատանքը հանգեցնում է բետոնի փոշու արտանետմանը: Այն դեպքում, երբ օգտագործվում են շարժական բետոնի և/կամ ասֆալտի գործարաններ ապա վերջինիս ոչ պատշաճ կառավարման դեպքում այն կարող է բացասական ազդեցություններ ունենալ ջրերի, գրունտային ջրերի և օդի վրա: Պետք է խուսափել այս տեսակի ասֆալտի գործարանների օգտագործումից: Բոլոր ասֆալտ գործարանները մինչ շինարարական աշխատանքներում օգտագործելը պետք ստուգված և հավաստագրված լինեն համաձայն ՀՀ նորմերին համապատասխան:

Շինարարական աշխատանքներից առաջացած փոշին բացասական ազդեցություն են թողնում մթնոլորտի / օդի որակի վրա, և հետևաբար անհրաժեշտ է արդյունավետ միջացառումներ ձեռնարկել այդ բացասական ազդեցությունը, հատկապես բնակավայրերում, նվազագույնի հասցնելու համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ծավալուն թրթռումները կարող է բացասական ազդեցություն ունենալ շինարարական տեղամասերին մոտ գտնվող պատմամշակութային հուշարձանների, շինությունների և կառուցվածքների վրա, ինչպես նաև անհանգստություն պատճառել նրանց բնակիչներին և նրանցից օգտվողներին, անհրաժեշտ է արդյունավետ պաշտպանական միջոցներ ձեռնարկել բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար, հատկապես մոտակա բնակավայրերում:

Կենսաբազմազանության վրա ազդեցություններ: Ակնկալվում է, որ նախատեսվող շինարարական աշխատանքների արդյունքում կենսաբազմազանության վրա հիմնականում ազդեցությունները կլինեն կառավարելի, քանի որ ծրագրի նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է քաղաքային կառուցապատված միջավայրում, իսկ էկոհամակարգերը զգալի վերափոխվել և ենթարկվել են նշանակալի անտրոպոգեն ազդեցությունների: Միաժամանակ մետրոյի ենթակառուցվածքների կառուցումը կարող է պահանջել բուսականության մաքրում և ապրելավայրի ոչնչացում, ինչը կհանգեցնի բնական միջավայրերի կորստի և մասնատման: Շինարարական աշխատանքների ընթացքում կարող է տեղի ունենալ բուսական ծածկի և վայրի կենդանիների, այդ թվում Բույսերի և Կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների բնակության վայրերի խանգարում/վնասում: Շինարարական աշխատանքների արդյունքում հնարավոր ազդեցությունները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել, հետևյալով. ծառերի և թփերի հատում, շինհրապարակներում բուսականության դեգրադացիա, հողի էրոզիա հանված հողի ոչ պատշաճ հեռացման և կուտակման պատճառով:

Համայնքի առողջություն և անվտանգություն: Ծրագիրը կարող է փոխել համայնքի ռիսկերի և ազդեցությունների ենթարկվելը, որոնք կարող են առաջանալ պատահարների և ենթակառուցվածքների քանդմամբ: Շինարարության ընթացքում համայնքի առողջության և անվտանգության ազդեցության ենթարկվելու վտանգը կարող է պայմանավորված լինել նաև աղմուկի ազդեցությամբ, հողի տեղափոխմամբ պայմանավորված փոշու և այլ արտանետումներով, պայթեցման աշխատանքների իրականացմամբ, լիցքի աշխատանքներով, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների շահագործմամբ: Սակայն, Ծրագրի շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած բացասական ազդեցությունները կարելի է նվազեցնել շինարարական գործընթացների և առաջարկվող մեղմացնող միջոցառումների պատշաճ կազմակերպմամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ: Վտանգը կարող է առաջանալ շինարարության ընթացքում (հողային աշխատանքներ, աշխատանքներ բարձրության վրա,

շինարարական ծանր տեխնիկայի շահագործման և այլն) առողջության և անվտանգության կանոնների ոչ պատշաճ իրագործման դեպքում: Անվտանգության միջոցառումների և համապատասխան երկարատև շինարարական փորձի պատշաճ կիրառման դեպքում շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հիմնականում վտանգներ չեն ակնկալվում:

Բնակչության վրա ազդեցություններ: Բնակչության և զբաղվածության վրա ունեցած ազդեցությունը հիմնականում դրական է: Շինարարական աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կթողնի այն վայրերի աշխատուժի ժողովրդագրական կառուցվածքի վրա, որտեղ կատարվում են ծրագրով նախատեսված աշխատանքները: Այն հնարավորություն կստեղծի երիտասարդների համար մնալ ծրագրի իրականացման տարածքում և ներգրավվել իրականացվելիք աշխատանքներում: Նոր կառուցված մետրոյի կայարանը կմեծացնի բնակչության տեղաշաժը, կնպաստի զբոսաշրջության աճին, հնարավորություն կստեղծի տնտեսական զարգացման համար:

Ազդեցություններ ծառայությունների և ենթակառուցվածքների վրա: Նախագծային լուծումամբ պայմանավորված առաջարկվող շինարարական աշխատանքները կարող են բացասական ազդեցություն ունենալ մետրոյի նախատեսվող գծի մոտակայքով անցնող կամ տարբեր ծառայությունների և ենթակառուցվածքների վրա, այդ թվում գազի խողովակների, էլեկտրականության կամ հեռահաղորդակցության մալուխների, օպտիկամանրաթելային մալուխների, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների, ոռոգման համակարգերի, կեղտաջրերի հեռացման համակարգերի, հետիոտնային անցումների, անասնանցումների, գյուղատնտեսական տեխնիկաների անցումների և այլնի վրա:

